ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.: (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017Թ.
№ 38 (456)
www.syuniacyerkir.am

2017թ. նոյեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետությունը եւ Եվրոպական միությունը ստորագրել են գործընկերության համաձայնագիր:

Տես՝ էջ 2

Մելիքսեթ Պողոսյան. «Համայնքը, մարզը մասնատելով՝ երկիրն է մասնատվում, թուլանում. կուզեի միասնական լինեինք, համախմբված, միմյանց արժանիք տեսնեինք, գնահատեինք ու ծառայեցնեինք երկրին»

Հարցազրույց գնդապետ ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆԻ հետ

- Պարոն գնդապետ, հավանաբար հեշտ չէ երկար տարիներից հետո զորացրվել, երբ երկիրը պատերազմական վիճակի, համակարգն էլ փոփոխությունների, նոր ծրագրերի ու աշխատանքների մեջ են, եւ Ձեր անելիքներն էլ դեռ շատ են:

Թվում է, ամենքին կարելի է զորացրվածի դերում տեսնել, բայց ոչ՝ Ձեզ:

Կարողանու՞մ եք դիմանալ հանգստի պարգեւած անբնական ցավին:

- Մի քանի օր է, ինչ ստացել եմ զորացրման հրամանը, դեռ ամբողջովին ինձ արձակված չեմ զգում, բայց փաստը դա է, ոչինչ չես կարող անել: Լրացել է պարտականություններիս կատարման տարիքը, պետք է գնամ:

Ասեմ, ինձ զորացրված չեմ զգում, անելիքներս իմ հայրենիքի հանդեպ մինչեւ վերջին շունչս՝ չեն վերջանալու, միշտ էլ իմ ժողովրդի հետ եմ:

Իսկ այս հանգիստն ինձ համար չէ, դեռ լի եմ ուժերով եւ պատրաստ եմ այն նորից ներդնել իմ ժողովրդի պաշտպանությանն ու բանակի հզորացմանը:

Որ պահի էլ կանչեն՝ մարտունակ եմ, վճռական, պատրաստ նոր անձնազոհության:

Այ, ուրիշ հարց է, երբ տարածքի լրագրողն ինձ պաշտոնական է դիմում, դա ինձ ստիպում է մտածել, որ իրոք զորացրվել եմ: Իմ տարածաշրջանում, գիտեք, ինձ ոչ ոք պարոն գնդապետ, կամ պարոն Պողոսյան չի դիմել, բոլորի համար ես «կամանդիր» եմ կամ ուղղակի՝ Մելո:

Խնդրում եմ շարունակեք ինձ այդպես դիմել:

- Ինչպես կասեք, պարոն գնդապետ, դա համակարգի լրագրողիս հարգանքն ու մեծարումն է Ձեր կատարած բազում սխրանքների ու Ձեր մարդ տեսակի նկատմամբ:

էջ 6

Մուրադ Սարգսյան. «Ներկայումս Սիսիան, Գորիս, Կապան քաղաքներում եւ փասը գյուղական բնակավայրում վերականգնվում է ջրամատակարարման եւ ջրահեռացման բաշխիչ ցանցը»

«Սյունյաց երկիր» թերթի հարցերին պատասխանում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ընկերության հանրային կապերի ծառայության պետ Մուրադ Սարգսյանը

- 2017թ. հունվարի 1-ից ֆրանսիական «Վեոլիա Գրուպ» ընկերության կողմից հիմնադրված «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն միջազգային մրցույթի արդյունքում դարձել է Հայաստանում ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի միասնական օպերատոր: Համառոտ ներկայացրեք ընկերության մատուցած ծառայությունների բնույթը: Առհասարակ ինչպիսի՞ քաղաքականություն է որդեգրել ընկերությունը:

- Ընկերությունը 2017թ. հունվարի 1-ից մատուցում է ջրամատակարարման եւ ջրահեռացման ծառայություններ նախկին «Երեւան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» եւ «Նոր Ակունք» ընկերությունների սպասարկման տարածքում: Մենք ծառայություններ ենք մատուցում Երեւանում, 41 այլ քաղաքներում ու 313 գյուղերում, ընդամենը՝ 355 բնակավայր: Դրանից բացի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն մեծածախ ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայություններ է մատուցում 53 բնակավայրում: Բացառություն են կազմում 560 համայնք, որոնք իրենց ուժերով են սպասարկում համայնքի սեփականությունը հանդիսացող ջրմուղ-կոյուղու համակարգերը:

էջ 3

Ինչով է պայմանավորված հանքարդյունաբերողների վճարած հարկերի աճը

Արդեն տեղեկացրել ենք, որ Հայաստանի հանքարդյունաբերական խոշոր ընկերություններն այս տարի զգալիորեն ավելացրել են իրենց կողմից պետբյուջե վճարվող հարկերն ու տուրքերը:

ՊԵԿ-ի կողմից հրապարակված 2017 թվականի հունվար-սեպտեմբերի խոշոր հարկատուների ցանկի առաջին 100-յակում տեղ են գտել 5 հանքարդյունաբերական ընկերություններ, որոնցից 3-ը՝ առաջին տասնյակում:

Հանքարդյունաբերական ընկերությունների շարքում խոշորագույն հարկատուն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է: Այս ընկերությունը նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ 2.5 անգամ ավելացրել է հարկերի ծավալը եւ 13.14 մլրդ դրամով զբաղեցրել խոշոր հարկատուների ցանկի 5-րդ հորիզոնականը (2016-ի սեպտեմբերին 17-րդ տեղում էր):

Հարկատուների ցանկում 7 տեղով առաջադիմել է նաեւ «Գեոպրոմայնինգ Գոլդը» եւ զբաղեցրել 6-րդ տեղը: Այս ընկերությունը տարվա առաջին ամիսներին վճարել է 10.22 մլրդ դրամի հարկեր, որը 36.6%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Թեղուտն այս հինգից միակն է, որը նվազեցրել է հարկերը, սակայն պահպանել է տեղը խոշոր հարկատուների առաջին տասնյակում: Ընկերությունը վճարել է 9.14 մլրդ դրամի հարկեր եւ զբաղեցրել 8-րդ տեղը:

Կապանի լեռնահարստացման կոմբինատը 2.6 անգամ է ավելացրել հարկերը եւ 4.65 մլրդ դրամով զբաղեցրել 17-րդ տեղը (2016 թվականի սեպտեմբերին 30-րդն էր):

Սակայն անվիճելի «չեմպիոնը» «Լիդիան Արմենիա» ընկերությունն է: Այն 12.5 անգամ ավելացրել է հարկերը՝ 321 մլն դրամից հասցնելով ավելի քան 4 մլրդ դրամի: Արդյունքում՝ «Լիդիան Արմենիան» նախորդ տարվա 277-րդ տեղից առաջադիմել է մինչեւ 19-րդ տեղը:

Զանգեզուրի առաջխաղացումը պարզ բացատրություն ունի. ընթացիկ տարում աճել են թե՛ պղնձի համաշխարհային գները, թե՛ Հայաստանից պղնձի արտահանման բնեղեն ծավալները:

Պղնձի 1 տոննայի բորսայական գինն արդեն մոտենում է 7000 դոլարին: Մոլիբդենի միջին կիսամյակային գինը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է տ/տ 27.9%-ով՝ կազմելով 19.6 հազար ԱՄՆ դոլար՝ մեկ տոննայի դիմաց:

Ըստ ԿԲ կանխատեսումների, կարճաժամկետ հեռանկարում, այլ հավասար պայմաններում, գունավոր մետաղների միջազգային գների վերականգնման միտումը կպահպանվի՝ պայմանավորված զարգացող երկրների պահանջարկի վերականգնմամբ:

Այսինքն, պղնձի խտանյութի արդյունահանմամբ զբաղվող ընկերությունների ցուցանիշները կշարունակեն բարելավվել նաեւ այս տարվա 4-րդ եռամսյակի ընթացքում:

Ոսկու գինը տարվա ընթացքում նույնպես աճել է, որով էլ բացատրվում է, օրինակ, «Գեոպրոմայնինգ Գոլդի» հարկերի աճը:

էջ 2

Հայաստանի Հանրապետությունը եւ Եվրոպական միությունը ստորագրել են Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը

2017թ. նոյեմբերի 24-ին Բրյուսելում նախագահ Սերժ Սարգսյանի եւ Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի ներկայությամբ ստորագրվեց Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:

ԵՄ Արեւելյան գործընկերության գագաթնաժողովի շրջանակներում փաստաթուղթը ստորագրել են ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը եւ ԵՄ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին:

president.am

Ինչով է պայմանավորված հանքարդյունաբերողների վճարած հարկերի աճը

էջ 1

Սակայն հարկերի թռիչքային՝ 12 անգամյա աճ գրանցած «Լիդիան Արմենիայի» դեպքում այս բացատրությունները չեն աշխատում: Ի տարբերություն ցանկում տեղ գտած մյուս հանքարդյունաբերական ընկերությունների՝ «Լիդիան Արմենիան» գործող հանք չէ: Ընկերությունն այս տարվա սկզբին է սկսել Ամուլսարի հանքի շինարարական աշխատանքները, եւ ոսկու արդյունահանումը կսկսվի միայն հաջորդ տարվա կեսերին:

«Լիդիան Արմենիայի» վճարած հարկերի մեծ մասը՝ մոտ 2.5 մլրդ դրամը, վճարվել է մաքսային մարմիններին՝ ԱԱՀ-ի եւ մաքսատուրքի տեսքով: Սա նշանակում է, որ «Լիդիան Արմենիան» սարքավորումներ եւ այլ կապիտալ ապրանքներ է ներկրել՝ ներդրումների համար: Ընդ որում՝ այս թվերը ցույց են տալիս, որ «Լիդիան Արմենիան» ոչ միշտ է դիմել ԱԱՀ-ի հետադարձման եւ մաքսատուրքի գծով արտոնություն ստանալու համար (որպես ներդրումային ծրագիր): ԱԱՀ-ի մի մասն էլ գոյացել է տեղական մատակարարներից ձեռք բերված ապրանքների եւ ծառայությունների դիմաց վճարումներից:

Վճարված ուղղակի հարկերի ծավալը նույնպես քիչ չէ՝ ավելի քան 1.5 մլրդ դրամ: Դրա մեջ մտնում է ընկերության առայժմ մոտ 200 հիմնական աշխատողների գծով վճարվող եկամտահարկը (հանքի շահագործման ընթացքում մշտական աշխատողների թիվը կկազմի մոտ 700), այնպես էլ՝ այլ հարկեր, օրինակ՝ արտասահմանյան առաջատար մասնագետներին եւ խորհրդատվական կազմակերպություններին Ամուլսարում արված ինժեներական կամ բնապահպանական աշխատանքների համար կատարված վճարներից գոյացած հարկերը: Մի խոսքով, «Լիդիան Արմենիան» արդեն 4 մլրդ դրամի հարկեր է վճարել՝ դեռ եկամուտ չստացած, ներդրումների եւ շինարարության փուլում: Ընդ որում՝ այդ 4 մլրդ դրամից 2.4 մլրդ դրամը վճարվել է միայն այս տարվա երրորդ եռամսյակի ընթացքում: Նույն տեմպով շարունակվելու դեպքում տարվա կտրվածքով այս թիվը կկազմի մոտ 6.5 մլրդ դրամ:

Սա հետաքրքիր միտում է՝ հաշվի առնելով, որ քննադատները հաճախ են հիշատակում, որ «Լիդիանը» գրանցված է Անգլիական Ջերսի կղզում, որը համարվում է օֆշորային գոտի: Այսինքն՝ անկախ այն բանից, թե որտեղ է գրանցված ընկերությունը, դեռեւս շինարարության փուլում այն արդեն առաջատար հարկատու է:

Իսկ ի՞նչ է լինելու հանքի արդյունահանումը սկսելուց հետո: Ըստ մասնագետների հաշվարկների՝ «Լիդիան Արմենիան» Ամուլսարի ոսկու հանքի ծրագրով լինելու է Հայաստանում առաջին հինգ խոշոր հարկատու ընկերություններից մեկը՝ գոյացնելով տարեկան միջինը մոտավորապես 50 մլն ԱՄՆ դոլարի հարկեր, ու եւս 17 մլն ԱՄՆ դոլարի հարկեր կգոյանան անուղղակի եւ այլ գործոններով պայմանավորված տնտեսական գործունեությունից:

Կարճ ասած՝ «Լիդիան Արմենիան» մի քանի ամսից կդառնա ՀՀ պետբյուջեի եկամտային մասն ապահովող հենասյուներից մեկը՝ չհաշված տնտեսական մյուս էֆեկտները:

Եթե պղնձի եւ ոսկու գներն առաջիկա տարիներին աճի միտում դրսեւորեն, ինչպես եւ կանխատեսվում է, ապա մետաղական հանքարդյունաբերության կշիռն ու նշանակությունը տնտեսության եւ արտահանման մեջ շարունակելու է աճել, որքան էլ ոմանց համար դա անցանկալի լինի:

168.am
ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ
16 նոյեմբերի 2017թ.

«Հայաստան» համահայկական հիմնադրամի Հեռուստամարաթոն 2017-ը՝ «Բերքառատ Արցախ» թեմայով

Նոյեմբերի 23-ին տեղի է ունեցել «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հեռուստամարաթոն 2017-ը, թեման է՝ «Բերքառատ Արցախ»:

Հեռուստամարաթոնից ստացված գումարն ուղղվելու է երկու խոշոր ծրագրի, նախ՝ Արցախի տարածքում իրականացվելու է խորքային հորերի հորատում ու նոր ոռոգման ցանցի կառուցում, երկրորդ՝ Արցախում տեղակայվելու են արեւային էներգետիկ կայաններ:

Հեռուստամարաթոնն ամեն տարի իրականացվում է ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում: Գործունեության 25 տարիների ընթացքում հիմնադրամը մոտ 700 000 նվիրատուների շնորհիվ ավելի քան 50 000 ծրագիր է իրականացրել Հայաստանում եւ Արցախում՝ ընդհանուր 350 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ: Կառուցվել, վերակառուցվել եւ իրականացվել են ավելի քան 605 կմ ճանապարհ, 580 կմ ջրագիծ ու ջրատար, 149 կմ գազամուղ, 70 կմ էլեկտրագիծ, 359 դպրոց եւ մանկապարտեզ, 24 համայնքային կենտրոն, 500 տուն եւ բնակարան, 75 առողջապահական հաստատություն, 58 մշակութային ու սպորտային կենտրոն, 100 ջերմոց, 169 կրթական, մշակութային ու գիտական ծրագրեր:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի Հեռուստամարաթոն 2017-ի ընթացքում հավաքվել է 12, 505, 456 դոլար. տեղեկացնում է հիմնադրամի մամուլի ծառայությունը:

2016 թվականին անցկացված հեռուստամարաթոնի ընթացքում հանգանակվել էր 15, 428, 777 ԱՄՆ դոլար, որն ուղղվել է Արցախի տուժած բնակավայրերի վերականգնմանը, Արցախի բազմազավակ ընտանիքների համար առանձնատների կառուցմանը եւ խաղաղ բնակչության անվտանգությանն ու պաշտպանությանն ուղղված միջոցառումներին:

Ըստ մամուլի հրապարակումների

Ջրի սակագինը սպառողների համար կմնա նույնը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ նոյեմբերի 22-ին կայացած նիստում քննարկվել է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման մասին հարցը:

Քննարկելով վերը նշված հարցը՝ հանձնաժողովը որոշել է խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների մատուցման գումարային սակագինը սահմանել 191,414 դրամ/խմ (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

Ընդունված որոշումն ուժի մեջ կմտնի 2018 թվականի հունվարի 1-ից:

Ջրային տնտեսության պետական կոմիտեի ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի վարչության պետ Արմեն Սերգոյանի տեղեկացմամբ՝ ջրի սակագնի ավելացած գումարը սուբսիդավորելու է պետությունը: Վերջիններս այս պահին վարչապետի հանձնարարականի հիման վրա առաջարկություններ են մշակում:

Ինչպես տեղեկանում ենք՝ ջրի սակագինը սպառողների համար նույնը կմնա մինչեւ 2018թ. դեկտեմբերի 31-ը:

Ըստ հանրապետական մամուլի

Մուրադ Սարգսյան. «Ներկայումս Սիսիան, Գորիս, Կապան քաղաքներում եւ գասը գյուղական բնակավայրում վերականգնվում է ջրամատակարարման եւ ջրահեռացման բաշխիչ ցանցը»

«Սյունյաց երկիր» թերթի հարցերին պատասխանում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության հանրային կապերի ծառայության պետ Մուրադ Սարգսյանը

էջ 1

«Վեոլիա Ջրի» քաղաքականությունն ուղղված է բարելավելու բաժանորդներին մատուցվող ծառայությունների որակը՝ ըստ վարձակալության պայմանագրի ու լիցենզիայի պահանջների, զարգացնելու ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով Երեւանի ու մարզերի միջեւ առկա տարբերության վերացմանը՝ միաժամանակ կատարելով ջրային եւ էներգետիկ ռեսուրսների խնայում՝ նոր տեխնոլոգիաների եւ լուծումների ներդրմամբ:

- Ենթադրում ենք, որ ընկերությունում նաեւ կառուցվածքային փոփոխություններ են կատարվել: Ի՞նչ բնույթի են դրանք, եւ արդյո՞ք հաստիքների կրճատում եղել է:

- Վերը նշված նախկին հինգ ընկերության մեխանիկական միավորման արդյունքում ներկայումս «Վեոլիա Ջուր»-ն ունի մոտ 3000 աշխատակից: Ստեղծվել է համապատասխան կառուցվածք: Սակայն ակնհայտ է, որ ընկերության առջեւ ծառացած խնդիրները պահանջում են շարունակաբար կատարելագործել այդ կառուցվածքը, լուծարել որոշ ծառայություններ՝ փոխարենը ստեղծելով նորերը: Նոր տեխնիկան ու տեխնոլոգիաները նոր պահանջներ են ներկայացնում աշխատակազմին, հետեւաբար՝ շարունակաբար խստանալու են աշխատանքին ներկայացվող չափանիշները: Ակնհայտ է, որ այս պայմաններում կադրային փոփոխություններն անխուսափելի են, իսկ արտադրողականության բարձրացումը, գործառույթների քանակի նվազեցումը կամ համատեղումը հանգեցնելու են նաեւ աշխատակիցների թվի կրճատմանը: Բայց ակնհայտ է նաեւ, որ լավ աշխատողները երբեք ավելորդ չեն լինում, ու նրանց թվաքանակի կրճատումը չի կարող մեզ համար ինքնանպատակ լինել: Ընկերությունը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը՝ որպես հաջողության կարեւորագույն գրավականներից մեկի:

- Որքանո՞վ է արդյունավետ կառավարման նոր ձեւը Սյունիքում՝ հատկապես կենտրոնական գրասենյակը Վայոց ձորի մարզ տեղափոխելով:

- «Վեոլիա Ջրի» կենտրոնական գրասենյակը եղել եւ այժմ էլ գտնվում է Երեւանում, իսկ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի նախկին «Հայջրմուղկոյուղու» տեղամասը վերանորոգելուց հետո վերածվել է Վեոլիա Ջրի «Արեւելք» տարածաշրջանի կենտրոնի, որտեղ մի հարկի տակ աշխատում են թե՛ շահագործման, թե՛ առեւտրային ծառայությունները, թե՛ ջրի որակի լաբորատորիան եւ թե՛ հատուկ մասնագետների խումբը:

Այն կոչվում է տարածաշրջանի կենտրոն, քանի որ ունի տարածաշրջանային նշանակություն: Վայքը, գտնվելով «Վեոլիա Ջրի» սպասարկման «Արեւելյան» կոչվող գոտու մեջտեղում (որը ձգվում է Դիլիջանից մինչեւ Մեղրի՝ ներառելով Գեղարքունիքը, Վայոց ձորն ու Սյունիքը), բոլոր այս տարածքները կապող օղակն է:

«Արեւելք»-ի ստեղծումը թույլ է տալիս ավելի մոտ լինել սպառողներին, ծանոթանալ նրանց կարիքներին ու փորձել օպերատիվ կերպով արձագանքել ահազանգերին: Երեւանի փոխարեն, հիմա այստեղից ավելի արագ կարելի է հասնել տեղի բնակավայրեր եւ լուծել խնդիրները: Հենց այս տրամաբանությամբ էլ այստեղ է ստեղծվել ողջ տարածաշրջանի համար ընդհանուր մի պահեստ՝ բոլոր անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով եւ հատուկ տեխնիկայով հագեցած մեքենամեխանիզմների բաժնով:

- Հանրապետության ողջ տարածքում պարբերաբար կատարվում են պլանային եւ վթարային ջրանջատումներ. ինչո՞վ կբացատրեք դրանց հաճախակիությունը:

- Հայաստանում ջրմուղ-կոյուղու համակարգերի տեխնիկական ոչ բարվոք վիճակով ու դրանց զարգացնելու անհրաժեշտությամբ:

Հնամաշությամբ պայմանավորված՝ խողովակաշարերը, չդիմանալով ջրի ճնշմանը, շարունակ վթարվում են, իսկ վերանորոգումը՝ որպես կանոն, պահանջում է ջրանջատում: Մյուս կողմից՝ գարնանից սկսած «Վեոլիա Ջուր»-ը մշակում ու իրականացնում է ներդրումային ծրագրեր՝ համակարգերը ժամանակակից պայմաններին համապատասխանեցնելու ու բարվոք ջրամատակարարում ապահովելու նպատակով: Հասկանալի է, որ հին ջրագծերն ապամոնտաժելու ու նորերը համակարգին միացնելու համար նորից պահանջվում է ջրամատակարարման ընդհատում: Էլ ավելի բարդ է ու խնդրահարույց աղբյուրների վերանորոգումը: Սակայն դա նույնպես անխուսափելի է, եթե հաշվի առնենք նախկին օպերատորներից «ժառանգած» տնտեսության վիճակը:

Իհարկե, մենք ունենք զգալի փորձ աշխատանքները համատեղելու ու ջրանջատումների քանակը նվազեցնելու համար: Սակայն, միեւնույն է, ստեղծված պարագայում դրանցից խուսափել հնարավոր չէ: Սպառողները կարող են մխիթարվել նրանով, որ ջրանջատումներից հետո նրանք ստանում են ավելի կանոնավոր ու երկարաձգված ջրամատակարարում, ինչը եւ մեր գործունեության իմաստն է հանդիսանում:

- Այս օրերին հանրության մտահոգիչ հարցերից մեկն էլ կապված է ջրի սակագնի բարձրացման հետ. որքանո՞վ են հավաստի այդ խոսակցությունները:

- Մատուցվող ծառայությունների սակագները չեն թանկացել, դրանք ընդհանրապես նոր են կազմվել: Սակագները ձեւավորվել են ֆրանսիական «Վեոլիա Գրուպ»-ի եւ ՀՀ կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի միջեւ բանակցությունների արդյունքում: Ի վերջո, հաշվի առնելով Հայաստանում ստեղծված ծանր տնտեսական եւ սոցիալական վիճակը, «Վեոլիա Գրուպ»-ը համաձայնվել է 180 դրամ՝ 1 մետր խորանարդ ջրի համար սակագնին, որպես (այսպես կոչված) բազիսային սակագին գործունեության առաջին տարվա համար: Դա այն նվազագույն սակագինն է, որը թույլ կտա ընկերությանն ապահովել համակարգի բնականոն գործունեությունը եւ կատարել հայկական կողմի՝ ծառայությունների որակին ու ներդրումներին վերաբերող պահանջները:

Պայմանագրի կետերից մեկի համաձայն էլ ամեն տարի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն պարտավոր է իր կողմից մատուցվող ծառայությունների սակագների ճշգրտման հայտ ներկայացնել ոլորտը կարգավորող մարմին՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, ինչը եւ տեղի ունեցավ օգոստոսին: Հայտը կազմվել է վարձակալության պայմանագրի հավելված հանդիսացող Սակագնային համաձայնագրի, Հայաստանում ընդունված մեթոդաբանության ու որոշակի մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա: Սակագների ճշգրտման հայտի հիմնավորվածության մասին վերջինս համապատասխան որոշում կընդունի նոյեմբերի 22-ին: Այն կկիրարկվի 2018թ. հունվարի 1-ից:

- Բացի բնակիչների օգտագործած ջրի քանակի համար վճարումից՝ ուրիշ ի՞նչ վճարովի ծառայություններ է իրականացնում ընկերությունը:

- Ընկերությունը մատուցում է ջրամատակարարման եւ ջրահեռացման ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ ծառայություններ, ստորգետնյա ջրերի հեռացման ծառայություն «Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն»-ում, խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործելու ծառայություն, ջրմուղ-կոյուղու համակարգերի սպասարկման ծառայություն համայնքներին՝ պայմանագրի հիման վրա, ինչպես նաեւ նոր համակարգի կառուցման ծառայություն՝ դիմող անձի ցանկությամբ:

- Հատկապես մարզի հանքարդյունաբերական համայնքներում բնապահպանները հաճախ են բարձրաձայնում ջրի որակի խնդիրների մասին: Ձեր ընկերությունը նմանատիպ լաբորատոր ստուգումներ անցկացրե՞լ է, եւ, եթե գաղտնիք չէ, ինչպիսի՞ արդյունքներ են գրանցվել:

- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի համակարգում ջուրը ստացվում է մեծ մասամբ լեռնային աղբյուրներից եւ լիովին համապատասխանում է խմելու ջրի՝ Հայաստանում գործող սանիտարական նորմերին եւ կանոններին: Որպես կանոն այն մատակարարվում է սպառողներին՝ առանց լրացուցիչ մաքրման: Այնուամենայնիվ, ջրի անվտանգությունն ապահովելու նպատակով, աղբյուրներում, քլորակայանների միջոցով, կանխարգելիչ նկատառումներով, ջուրը քլորացվում է՝ ապահովելով վերջինիս մեջ 0.3-0.5 մգ/դմ3 մնացորդային քլորի առկայություն: Դրանից բացի՝ ընկերությունն ունի արդիական սարքավորումներով հագեցած խմելու ջրի լաբորատորիաներ ողջ Հայաստանում, որտեղ կատարվում է ջրի որակի ֆիզիկաքիմիական եւ կենսաբանական փորձաքննություն՝ ըստ հաստատված ժամանակացույցի:

Սա՝ ջրի որակի վերաբերյալ ընդհանրապես: Կոնկրետ Սյունիքի մարզում ամենախնդրահարույցը Կապանի ջրամատակարարումն է, որին տրվող ջրի մի մասը վերցվում է գետից: Բնականաբար, ձնհալից ու հորդ անձրեւներից հետո գետը վարարում է, ջուրը՝ պղտորվում, ինչը դրա մաքրման գործում առաջացնում է որոշակի դժվարություններ: Ներկայումս ընկերությունն ուսումնասիրում է իրավիճակը՝ արդեն տեսանելի ապագայում առկա խնդիրներին արմատական լուծում տալու նպատակով:

Ինչ վերաբերում է հանքարդյունաբերությանն ու բնապահպաններին մտահոգությանը, ապա պետք է ասել, որ ընդերքի օգտագործումն ընդհանրապես վիճահարույց է ողջ աշխարհում: Խնդիրներն այստեղ կարգավորում են օրենսդրությամբ ու համապատասխան գերատեսչությունների խողովակներով: «Վեոլիա Ջուր»-ը դրա հետ որեւէ առնչություն չունի: Ընկերության համակարգի աղբյուրները Սյունիքի մարզում հանդիսանում են հատուկ պահպանվող սանիտարական գոտիներ՝ իրենց հստակ սահմաններով, գործում են բնականոն ռեժիմով ու արտադրում են պահանջվող որակի ջուր: Մեր խնդիրը դրանց տեխնիկական վիճակը մշտապես ուշադրության կենտրոնում պահելն է, վերանորոգելն ու շահագործելը՝ տարածաշրջանի բնակավայրերը խմելու ջրով ապահովելու համար:

- Տարբեր տարիներին մարզի համայնքներում խմելու ջրի ներքին ցանցում վերանորոգման աշխատանքներ են իրականացվել, բայց կոյուղատարի վիճակն այնքան էլ բարվոք չէ: Ծրագրվո՞ւմ է մարզում կոյուղատար ցանցում եւս բարեփոխման աշխատանքներ կատարել:

- Համաձայն վարձակալության պայմանագրի՝ ընկերությունը միայն պահպանում է, վերանորոգում ու շահագործում իր համակարգում գտնվող պետական գույքը: Այս առումով, այո՛, բարեփոխումներ սպասվում են (ավելին՝ արդեն իրականացվում են) նաեւ Սյունիքի մարզում: Արդյունքը տեսանելի է մարզի բնակիչների համար: Սակայն ընկերությունը պարտավորություն չունի կառուցել նոր ջրագծեր կամ կոյուղագծեր: Դրանով զբաղվում է վարձատուն՝ ՀՀ ԷԵԲՊ նախարարության համակարգի Ջրային տնտեսության պետական կոմիտեն:

2017թ. կապիտալ ներդրումների ծրագրով «Վեոլիա Ջրի» կողմից նախատեսվում է ողջ Հայաստանում իրականացնել մոտ 1,8 մլրդ դրամի բազմապիսի աշխատանքներ: Իսկ Վարձակալության պայմանագրի գործողության 15 տարվա ընթացքում ներդրումների ծավալը համակարգում կկազմի առնվազն 37,5 մլրդ դրամ:

- Նախկին օպերատորի օրերում մի շարք ծրագրեր են իրականացվել մարզի համայնքներում: Հետաքրքի՞ր է՝ դրանք ավարտվե՞լ են, թե՞ կիսատ են մնացել օպերատորի փոփոխությամբ պայմանավորված:

- Քանի որ «Վեոլիա Ջուր»-ը չի հանդիսանում նախորդ հինգ օպերատորից որեւէ մեկի իրավահաջորդը, ամբողջական որեւիցե տեղեկատվություն նրանց ծրագրերի եւ գործունեության, առավել եւս ներդրումների արդյունավետության մասին, ցավոք, չենք կարող տրամադրել: Այս հարցում Ձեզ թերեւս կօգնի Ջրային տնտեսության պետական կոմիտեն: Սակայն մեր կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ շատ ծրագրեր ավարտին չեն հասցվել կամ իրականացվել են զգալի թերություններով, ինչը վթարների, ջրի կորստի ու անկանոն ջրամատակարարման պատճառ է հանդիսանում: Ներկայումս ընկերությունը ձեռնարկում է միջոցներ սեփական ուժերով ու հնարավորինս սեղմ ժամկետներում իրավիճակը շտկելու համար:

- Ենթադրում ենք, որ ուսումնասիրություններ եք կատարել մարզի ջրամատակարարման համակարգում: Որո՞նք են մեր մարզի՝ այդ ոլորտում առաջնային լուծում պահանջող խնդիրները: Ի՞նչ նոր ծրագրեր են նախատեսվում Սյունիքի մարզի ջրամատակարարման բարելավման նպատակով:

- «Վեոլիա Ջուր»-ն իր գործունեության առաջին տարում մարզի որոշ համայնքներում սկսել է բնակավայրերի ներքին բաշխիչ ցանցի գոտիավորման աշխատանքներ, փոխարինել վթարված շատ ջրագծեր ու խցանված կոյուղիներ, հնարավորինս լուծել մարզում առկա առավել հրատապ խնդիրները: Ներկայումս գերմանական KFW բանկի ծրագրով Սիսիան, Գորիս, Կապան քաղաքներում եւ 10 գյուղական բնակավայրում վերականգնվում է ջրամատակարարման ու ջրահեռացման բաշխիչ ցանցը, կառուցվում են կոլեկտորներ, ինչի հիմնական նպատակն է տվյալ տարածքներում 24-ժամյա ջրամատակարարում ապահովելը: Իր հերթին «Վեոլիա Ջուր»-ը եւս կազմում է ներդրումային ծրագրեր 2018թ. համար:

- Հետաքրքի՞ր է, բնակիչների պարտքերի մարման հետ կապված ինչպիսի՞ քաղաքականություն եք վարում:

- Ինչպես նշվեց, «Վեոլիա Ջուր»-ը չի հանդիսանում նախորդ ջրամատակարարի՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ իրավահաջորդը, հետեւաբար նաեւ նախկինից մնացած պարտքերի մարման հետ կապված ինչպես չունի որեւէ իրավասություն, այնպես էլ չի կրում պատասխանատվություն: Թե ինչպիսին կլինի բաժանորդներին հուզող այս խնդրի լուծումը՝ կարելի կլինի իմանալ՝ դիմելով վերը նշված կազմակերպությանը, որը, ճիշտ է, այլեւս չի սպասարկում մարզը, սակայն շարունակում է գործել իր կանոնադրության շրջանակներում:

Հարցազրույցը՝
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում. մի հայցադիմումի հետքերով

Վահե Հակոբյանը կկանչվի դատարան՝ ցուցմունք տալու եւ մյուս կողմի հարցերին պատասխանելու համար

2017թ. դեկտեմբերի 15-ին՝ ժամը 11-ին, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Մեղրու նստավայրում կմեկնարկի դատական նիստ, որը քննարկի Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի հայցն ընդդեմ Արթուր Օրբելյանի եւ «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերության, որ հիմնադիրն է «Սյունյաց երկիր» թերթի:

Դատաքննության առարկան syuniacyerkir.am կայքում ս.թ. սեպտեմբերի 19-ին հրապարակված հոդվածն է՝ **«Վահե Հակոբյանը ստել է. հայտարարագրում նշված տեղեկությունները եւ նրա ֆինանսական հոսքերն իրար չեն համընկնում, ինչը վկայում է հնարավոր կոռուպցիայի մասին»:**

Ըստ Վահե Հակոբյանի՝ հրապարակվել են իրականությանը չհամապատասխանող փաստական տվյալներ, որոնք արատավորում են իր պատիվն ու արժանապատվությունը, որոնք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ հանդիսանում են զրպարտություն, ինչը ենթակա է պաշտպանության եւ սահմանված կարգով պատասխանատվության:

Վահե Հակոբյանի կարծիքով՝ լրատվամիջոցը կրում է համապարտ պատասխանատվություն, ինչի համար որպես պատասխանող է ներգրավվել նաեւ «Սյունյաց երկիր» թերթի հիմնադիր «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերությունը:

«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ-ն, անտարակույս, ակտիվ մասնակցություն կունենա դատաքննությանը: Եվ, ինչպես նմանատիպ նախորդ իրավիճակներում, թերթը դատարան կներկայանա առանց դատապաշտպանի: ՍՊ ընկերության եւ կայքի շահերը կներկայացնի Սամվել Ալեքսանյանը:

Ահա թե ինչ հայտարարեց թերթի խմբագիրը Վահե Հակոբյանի հայցադիմումին ծանոթանալուց հետո. **«Զարմացած եմ Վահե Հակոբյանի հայցադիմումի սնանկության վրա. իրավական անգրագիտության իսկական գլուխգործոց է: Մի՞թե կարելի էր նման հիմնազուրկ հայցադիմումի տակ ստորագրություն դնել եւ հերթական անգամ ծիծաղելի դառնալու ստույգ հեռանկարի առջեւ կանգնել՝ այդքան անվաստակ միջոցներ ու երեւանից ներկրված անթիվ իրավաբաններ ունենալու դեպքում: «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում անպայման դատարան կներկայացնի իր առարկությունները: Սակայն, իբրեւ համապարտ պատասխանող, ՍՊ ընկերության պատասխանը չի կարող ամբողջական լինել ու իրավական արժեք ստանալ, քանի դեռ Վահե Հակոբյան հայցվորը չի կանչվել դատարան եւ ցուցմունք չի տվել, չի պատասխանել գործի համար էական նշանակություն ունեցող մեր հարցերին: Այո՛, մարզպետը պետք է դատականչվի ու հարցաքննվի. նախնական դատական նիստի առաջին իսկ օրը հանդես կգամ նման միջնորդությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի քանի հանրահայտ հոդվածներ: Համոզված եմ՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանն օրենքի հանդեպ հարգանք կդրսեւորի եւ թույլ չի տա, որ հայցվորը դատական ատյանը շփոթի Քաջարանի կոմբինատի արտադրամասերից մեկի հետ: Մի խոսքով՝ կարվի հնարավորը, որ դատաքննության ընթացքում վերստին ու վերջնականապես դիմակազերծվի այդ պարոնը»:**

Դե ինչ, շատ հետաքրքիր դատավարություն է ենթադրվում, որին սպասում ենք անհամբերությամբ:

Սեփ. լրատվություն

Չորս մեջբերում Սահմանադրությունից, չորսն էլ՝ ամբողջապես կեղծված-աղավաղված

Ընթերցողը տեղյակ է, որ Վահե Հակոբյանը հայցադիմում է ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Արթուր Օրբելյանի եւ «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերության՝ իր պատվին եւ արժանապատվությանն իբր պատճառված վնասի փոխհատուցման եւ հերքման պարտավորեցնելու պահանջով:

Վեճի առարկան խորհրդաստ եւ հրաշալի մի հրապարակում է՝ «Վահե Հակոբյանը ստել է. հայտարարագրում նշված տեղեկությունները եւ նրա ֆինանսական հոսքերն իրար չեն համընկնում, ինչը վկայում է հնարավոր կոռուպցիայի մասին» վերնագրով:

Դատական առաջին նիստը տեղի կունենա 2017թ. դեկտեմբերի 15-ին՝ ժամը 11-ին, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի Մեղրու նստավայրում:

Մեկ անգամ արդեն արձագանքել ենք Վահե Հակոբյանի հայցադիմումին՝ համարելով այն բացառիկ անգրագիտության գլուխգործոց:

Բայց դա առաջին տպավորությունն էր միայն: Հետո, երբ ավելի հանգամանալից ծանոթացանք հայցադիմումին, նորանոր արտառոցությունների բախվեցինք: Մի ուրիշ բան էլ բացահայտվեց՝ Սյունիքի թիվ 1 պետական պաշտոնյան տեղյակ չէ, որ Հայաստանի Հանրապետությունում 2015թ. դեկտեմբերի 6-ին սահմանադրական փոփոխություններ են կատարվել, ընդ որում՝ արմատական փոփոխություններ:

Մեզ թվաց նաեւ, որ Վահե Հակոբյանը հայցադիմումը ստորագրել է առանց ընթերցելու կամ ընթերցել ու չի հասկացել, թե ինչ է ստորագրում:

Ուրիշ տպավորություն էլ ստացանք՝ Երեւանից բերված ու նրա անձին ծառայող իրավաբանները (մարզպետարանում եւ Քաջարանի կոմբինատում ծվարած) դիտավորությամբ են իրենց շեֆին նման անգրագետ թուղթ դեմ տվել՝ նրան երիցս ծիծաղելի վիճակի մեջ գցելու եւ իրենցից կախված պահելու նպատակով:

Եվ, այդուհանդերձ, ի՞նչ անոմալիաներ ենք բացահայտել Վահե Հակոբյանի հայցադիմումի մեջ, որ պատշաճ համարեցինք ներկայացնել ընթերցողին:

Խոսքը հայցադիմումի իրավական հիմքերի կամ վեճը լուծելու համար կիրառման ենթակա օրենքների մասին է, որ փորձել է ուրվագծել հայցվորը:

Այդ հարցը սովորաբար ու վերջնականապես ճշտվում է նախնական դատական նիստում (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 149-8, 2-րդ կետ, 3-րդ մաս): Բայց հայցադիմումի մեջ էլ նշվում են հանգամանքներն ու իրավական հիմքերը, որոնց վրա կառուցվել են հայցապահանջները (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 87, 2-րդ կետ):

Այժմ տեսնենք, թե հայցադիմումն իրավական ի՞նչ հիմքերի վրա է կառուցել մարզպետը. խոսքն առայժմ ՀՀ սահմանադրությանն առնչվող հիմքերի մասին է միայն:

Ըստ Վահե Հակոբյանի՝ պատասխանողը խախտել է ՀՀ սահմանադրությամբ սահմանված իր իրավունքները: Եվ հայցադիմումի տարբեր մասերում քանիցս նշում է Սահմանադրության այդ հոդվածները, որոնց խախտման հետեւանքով իբր վնաս է հասցվել իր պատվին ու արժանապատվությանը:

Ահա եւ Սահմանադրության հոդվածները, որ վկայաբերում է հայցվորը՝ 18, 19, 27, 43:

Հիմա տեսնենք, թե ի՞նչ է ասում հայցվորը, եւ ի՞նչ են ասում Սահմանադրության վկայակոչված հոդվածները:

Վահե Հակոբյանն ասում է՝ **«Համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության 18-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք» (հայցադիմումի էջ 8):**

Բացում ենք ՀՀ սահմանադրության 18-րդ հոդվածը… Նման շարադրանք չենք գտնում: Հոդվածը (երկու մասով) սահմանում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու տեղն ու դերը Հայաստանի Հանրապետությունում:

Վահե Հակոբյանն ասում է (հայցադիմումի էջ 9)՝ **«Համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության 19-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:**

Բացում ենք ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածը եւ կարդում ենք բոլորովին այլ բան՝ Հայկական սփյուռքի հետ կապերը:

Վահե Հակոբյանն ասում է (հայցադիմումի էջ 9)՝ **«ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք…»:**

Բացում ենք ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածը… Վահեն նորից է խաբել-աղավաղել:

Սահմանադրության 27-րդ հոդվածը միագամայն այլ հարցեր է կարգավորում՝ անձնական ազատությունից մարդուն զրկելու հիմունքները:

Վահե Հակոբյանն ասում է (հայցադիմումի էջ 9)՝ **«ՀՀ սահմանադրության 43-րդ հոդվածի ուժով մարդու եւ քաղաքացու… ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե…»:**

Բացում ենք ՀՀ սահմանադրության 43-րդ հոդվածը… Վահեն շարունակում է աղավաղել: Այնտեղ բոլորովին այլ բան է գրված՝ **«Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական եւ տեխնիկական ստեղծագործության ազատություն»:**

Այսպիսի բաներ… Չորս անգամ վկայակոչում է Հայաստանի Հանրաետության սահմանադրության այս կամ այն հոդվածը եւ ոչ մի անգամ ճիշտ չի ներկայացնում տվյալ հոդվածի բովանդակությունը, ավելի ճիշտ՝ այլ բան է ներկայացնում:

Եվ գիտելիքների նման աննախադեպ երաշտի մեջ տապակվող պարոնը՝ երկրի Սահմանադրության հանդեպ ունեցած ակնհայտ ծաղրական եւ իմիջիայլոց վերաբերմունքով, դիմել է դատարան՝ ասելով՝ Սահմանադրության նշված հոդվածներով (իսկ նման հոդվածներ, ինչպես տեսնում եք, գոյություն չունեն) սահմանված-պաշտպանված իրավունքներս խախտել են՝ այդպես էլ չհիմնավորելով, թե ինչ է ուզում դատարանից եւ ինչ է ուզում ասել առհասարակ:

Ինչեւէ, ինչո՞ւ է նման արտառոցություն տեղ գտել մարզպետի հայցադիմումի մեջ:

Վերեւում երկու-երեք նկատառում արդեն հայտնեցինք, բայց փորձենք ամբողջացնել ասվածը: Մեր կարծիքով՝ չիմացության նման հրավառություն կարող էր տեղի ունենալ մի քանի պատճառով՝ ա) հայցվորը տեղյակ չէ, որ Հայաստանում Սահմանադրություն է փոխվել, բ)հայցվորը ստորագրել է հայցադիմում՝ չընթերցելով այն, գ)հայցվորն ընթերցել է դիմումը, բայց չի հասկացել, թե ինչի մասին է խոսքը, դ) հայցվորը լուրջ չի վերաբերվել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին՝ այն շփոթելով մարզպետարանի աշխատակազմի կամ Քաջարանի կոմբինատի որեւէ արտադրամասի կամ իրենց գյուղի ձմերուկի պլանտացիաների հետ, ե)Երեւանից բերված ու իրեն սպասարկող իրավաբանները դիտավորյալ են անհարմար վիճակի մեջ գցել իրենց շեֆին…

Ասվածին ավելացնելու ոչինչ չունենք: Բայց ինքներս մեզ չենք կարող չհարցնել կրկին՝ սա՞ է լուսավոր այս դարում Սյունիքի (թեկուզ եւ ժամանակավոր) ղեկավարը:

Չէ, ամեն ինչ ավելի լուրջ է, քան պատկերացնում ենք…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Կեղծ մեջբերումների նոր բացահայտումներ Վահե Հակոբյանի հայցադիմումի մեջ

«Սյունյաց երկիր» թերթի կայքում Վահե Հակոբյանի ունեցվածքի վերաբերյալ հայտարարագրի ոչ հավաստի լինելու մասին արդեն գրել ենք: Գրել ենք նաեւ, որ նա դիմել է դատարան՝ պնդելով, որ այդ հրապարակման մեջ տեղ են գտել զրպարտող արտահայտություններ իր անձի մասին:

Սակայն շատ շուտով բացահայտվել է, որ հայցադիմումի իրավական հիմքում դրված է նաեւ ՀՀ սահմանադրության՝ գոյություն չունեցող չորս հոդված:

Հիմա էլ պարզվում է, որ հայցադիմումի մեջ ՀՀ օրենքներից կեղծ մեջբերումները դրանով չեն ավարտվել:

Իրավական նորահայտ անհեթեթությունների մասին՝ ստորեւ:

Վահե Հակոբյանի հայցադիմումի 2-րդ էջում գրված է՝ **«««Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից»:**

Բացում ենք «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը. այնտեղ բոլորովին այլ բան է գրված՝ **«Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները»:**

Վահե Հակոբյանի հայցադիմումի 9-րդ էջում նշված է՝ **«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ... 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը»:**

Բացում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածը: Պարզվում է՝ նախ, այդ հոդվածն 1-ին կետ ընդհանրապես չունի: Ավելին՝ 13-րդ հոդվածը միանգամայն այլ բովանդակություն ունի՝ **«Դատարանը քաղաքացիական գործերով կայացնում է վճիռներ, որոշումներ եւ արձակում վճարման կարգադրություններ (այսուհետ՝ դատական ակտեր)»:**

Վահե Հակոբյանի հայցադիմումի 9-րդ էջում կարդում ենք՝ **«Նույն օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված են քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները, որոնցից մեկն իրականացվում է վնասներ հատուցելով»:**

Բացում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը. նորից այլ բան է գրված՝ **«Դատական ակտերի պարտադիր լինելը»:**

.... Ճիշտն ասած այլեւս չի զարմացնում Վահե Հակոբյանի հայցադիմումի ողորմելի մակարդակը: Չի զարմացնում նրա իրավաբանների՝ իրենց շեֆին ամեն գնով խայտառակելու ակնհայտ միտումը կամ հոսհոսությունը:

Մեզ զարմացնում է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի առեղծվածային պահվածքը:

Կարո՞ղ էր դատարանը նման անփույթ մակարդակով եւ աղավաղումներով ներկայացված հայցադիմումը վերադարձնել հայցվորին՝ սխալները շտկելու ազնիվ նպատակով: Իհարկե կարող էր, ավելի ճիշտ՝ պարտավոր էր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 92-ի 1/1 կետը սահմանում է՝ **«Դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե՝ 1)չեն պահպանվել սույն օրենսգրքի 87 հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձեւին եւ բովանդակությանն առաջադրվող պահանջները»:**

Իսկ ահա, թե ինչ է ասում վկայակոչված 87 հոդվածի 2-րդ կետը՝ **«Հայցադիմումում պետք է նշվեն՝ 4) հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները, 5)հայցապահանջները հաստատող ապացույցները»:**

Դա նշանակում է, որ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելուց առաջ առնվազն պետք է պարզեր, թե իրավական ի՞նչ հիմքերի վրա են կառուցված հայցապահանջները, բայց չի պարզել, քանի որ (կարելի է ենթադրել) մարզպետի հայցադիմումն էր:

Ստեղծված իրավիճակը, անշուշտ, մտահոգիչ է եւ հարցականի տակ է դնում Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի անկողմնակալությունը եւ անկախությունը:

Մենք ակնկալում ենք, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ժաննա Ասատրյանի պահվածքը ծառայողական քննության առարկա կդառնա պատկան մարմիններում:

Առնվազն պետք է պատասխան տրվի հարցերին՝ դատավորն օրենքի եւ իր պարտականությունների չիմացությա՞մբ է հայցադիմումը նման տեսքով վարույթ ընդունել, թե՞ իմացել է հայցադիմումի մեջ տեղ գտած կեղծ վկայություն-հղումների մասին, բայց չի կարեւորել կամ շրջանցել է դրանք ու հայցադիմումը վարույթ ընդունել ոչ պատշաճ վիճակում:

Երկու դեպքում էլ, կարծում ենք, Ժաննա Ասատրյանը չի կարող դատաքննել տվյալ հայցադիմումը:

Ելնելով վերը շարադրվածից՝ նախնական դատական նիստի առաջին իսկ օրը (դեկտեմբերի 15-ին), հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 21-ը եւ ՀՀ դատական օրենսգրքի հոդված 91-ը, միջնորդություն կներկայացնենք դատավորի ինքնաբացարկի մասին: Դատավորը, կարծում ենք, կհարգի Հայաստանի Հանրապետության դրոշն ու զինանշանը՝ դրված դատարանի դահլիճում, կհիշի ՀՀ դատական օրենսգրքի հոդված 91-ը եւ բացարկ կհայտնի: Իսկ 91-րդ հոդվածն ասում է՝ **«Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ»:**

Համոզված ենք, որ դատավոր Ժաննա Ասատրյանը, հանուն Հայաստանի Հանրապետության, դեկտեմբերի 15-ին ինքնաբացարկ կհայտնի, քանի որ նրա անկողմնակալությունն այլեւս ողջամիտ կասկած է հարուցում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գորիսի անտառտնտեսությունում ծառապունկ էր

Այն պահից, երբ մարդ էակը սկսեց գործիք՝ քարից դանակ, կացին պատրաստել, այդ պահից էլ սկսած հազարավոր, տասնյակ հազարավոր տարիներ նա ծառ է հատում, ավերում, ապականում շրջակա միջավայրը: Դա հատկապես ակնհայտ է կանաչ մակերեսների, մասնավորապես անտառային մակերեսների ինտենսիվ կրճատման առումով:

Դժբախտաբար, շրջակա միջավայրի նկատմամբ մարդու կողմից նման անմարդկային վերաբերմունքը շարունակվում է նաեւ այսօր, որի պատճառով տարին-տարուն երկրագնդի անտառային մակերեսների կրճատման-փոքրացման հաշվին ավելանում են անապատների, նոսր բուսածածկ ունեցող տափաստանային մակերեսները: Բանը հասել է նրան, որ մարդկության համար մահաբեր է համարվում ոչ թե նրա կողմից ստեղծված ջերմամիջուկային զենքերի հսկայական քանակությունը, այլ բնական ռեսուրսների անխնա շահագործումը, կանաչ մակերեսների, մասնավորապես անտառային մակերեսների կտրուկ կրճատումը, շրջակա միջավայրի աղտոտումը:

Խնդիրը շատ հրատապ է նաեւ մեր փոքր հանրապետության համար: Հանրագիտարանային տվյալներով մեր երկրի մակերեսի միայն 11 տոկոսն է անտառածածկ, որի մի մասն էլ խիստ նոսր անտառատեսքեր են: Վերջին տարիներին մեր կենցաղային դժվարությունների հետեւանքով անտառները, քաղաքային այգիները, պուրակները զգալիորեն նոսրացել են, առանձին տեղերում վերածվել կղզյակների, «հեռացել» բնակավայրերից: Ավագ տարիքի գորիսեցիները հիշում են, որ այսօրվա թիվ 3 հիմնական դպրոցի տարածքում, Սինդիրի ձորում շեկլիկ եւ կոճղասունկ են հավաքել, որոնք աճում են միայն խառն անտառներում:

Մեր ժողովուրդը շատ հարցերում է համայն մարդկության համար եղել դրոշակակիր, այդ թվում՝ նաեւ արհեստական անտառների հիմնման գործում: Գայթակղությունը մեծ է, եւ ես տեղի եմ տալիս. աշխարհի շատ ժողովուրդներ դեռ անտառում էին, երբ մեր Խոսրով արքան արհեստական անտառ տնկեց՝ դարերին թողնելով իր անունն ու տնկած ծառը:

Նման դեպքերի համար է ասված, որ ավանդույթը շարունակվում է: Անտառային հայտնի հրդեհների հասցրած վնասը մասնակիորեն վերականգնելու համար «Հայանտառ» ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ նոյեմբերի 4-ին անցկացվեցին անտառատնկման շաբաթօրյակներ բոլոր մարզերում: Հրազդանի անտառտնտեսության կողմից անհատույց տրամադրած 2000 տնկիները Գորիսի Սինդիրի ձորի փշատերեւ անտառի տարածքում տնկեցին Գորիսի պետական քոլեջի (տնօրեն՝ Կարեն Լազարյան) ուսանողները, Գորիսի անտառտնտեսության աշխատակիցները: Ծառատունկին մասնակցում էին նաեւ Սյունիքի մարզպետարանի աշխատակիցները:

Առիթից օգտվելով՝ հակիրճ զրուցում ենք «Սյունիք» անտառտնտեսության տնօրեն Արմեն Իշխանյանի հետ: Արհեստական անտառների հիմնման գործընթացը Գորիսի տարածաշրջանում սկսվել է անցած դարի 60-ական թվականներին: Երկար տարիներ այդ աշխատանքները հաջողությամբ ղեկավարել է երջանկահիշատակ Արամ Սելիկյանը, իսկ մասնագիտական հարցերը լուծել գլխավոր անտառապետ, հանրապետության վաստակավոր անտառաբույծ Աշոտ Իշխանյանը: Նրանց հիմնած անտառներն այսօր աչք են շոյում: Այդ անտառներից մեկն էլ փռված է Հարժիս գյուղի արեւմտյան սարալանջին: Այն հիմնվել է 1973 թվականին: Պատմում են, որ սկզբնական շրջանում գյուղացիներն ընդդիմացել են... Գյուղացու համար հեշտ չէր հրաժարվել գյուղի մերձակա մի քանի տասնյակ հա արոտներից: Այսօր այդ անտառը տարածաշրջանի լավագույններից է՝ հարուստ վայրի տանձ ու խնձորով, տասնյակ տեսակի սնկերով, հատապտուղներով:

Տողերիս հեղինակն անցնող տարի առիթի բերումով եղել է այնտեղ: Ինձ ուղեկցողներն ուրախությամբ եւ հպարտությամբ ցույց տվեցին, որ փշատերեւ անտառը վերարտադրվում է: Դա մեր տարածաշրջանում այդ ծառատեսակի համար հազվադեպ երեւույթ է: Իմ այս ակնարկին Արմեն Իշխանյանը հավելեց, որ նման վերարտադրություն կա նաեւ Գորիս քաղաքի շրջակա բոլոր փշատերեւ անտառահատվածներում: Հետո էլ շարունակեց, որ դա նշանակում է նաեւ, որ այդ ծառատեսակը հարմարվել է մեր կլիմայական պայմաններին, եւ բացի այդ էլ, դա մեկ անգամ եւս հաստատում է՝ մեր տարածաշրջանի օդը դեռ մաքուր է:

Փշատերեւ անտառն իր միկրոկլիման է ստեղծել, որի շնորհիվ այդ անտառներում աճում են փշատերեւին ուղեկից սնկերի՝ տասնյակին հասնող տեսակներ: Անտառտնտեսության Գորիսի մասնաճյուղը պատրաստվում է հաջորդ տարում հիմնել տնկարան, ինչպես նաեւ սնկի, տանձի, խնձորի, մասուրի, անտառի մյուս բարիքների հիմքի վրա փոքր արտադրություն կազմակերպել:

Վերադասում աջակցություն են խոստացել:

Մնում է նրանց հաջողություն մաղթել իրենց հայրենանվեր աշխատանքում:

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
5 նոյեմբերի 2017թ.

Մելիքսեթ Պողոսյան. «Համայնքը, մարզը մասնատելով՝ երկիրն է մասնատվում, թուլանում. կուզեի միասնական լինեինք, համախմբված, միմյանց արժանիք տեսնեինք, գնահատեինք ու ծառայեցնեինք երկրին»

էջ 1

Ինչպիսի՞ տրամադրության մեջ եք հիմա, այս պահին, երբ առաջին անգամ նստած եք զրույցի ոչ թե Ձեր աշխատասենյակում, այլ՝ սրճարան-ռեստորանի սեղանի շուրջ:

- Զզարմանաք, բայց տրամադրությունս բարձր է: Այդպես է որոշել իմ վերադասը, ուրեմն պարտավոր եմ այս մեկ հրամանն էլ կատարել:

Զորացրվածներ գիտեմ, ովքեր զորացրվելուց տխրում են, տրտնջում, թե ինչու՞ իրենց զորացրին՝ պատշաճ չգնահատելով անցած մարտական փորձն ու ճանապարհը, դեռ երիտասարդ տարիքը, իրենց պատրաստվածությունը:

Ես այդպես չեմ մտածում, ինձ գնահատել են ամբողջությամբ, առաջինը՝ իմ ժողովուրդն է գնահատել: Շնորհակալ եմ: Եթե օրենքի համաձայն նպատակահարմար են գտել զորացրվելս, դա է ճիշտը:

Ցանկությունս մեկն է՝ թող ինձանից ավելի երիտասարդ, ուժեղ եւ հզոր մարդու նշանակեն, ով կկարողանա արժանի ձեւով շարունակել, ոչ թե ուղղակի նստել աթոռին, աշխատանքում՝ հեռակայել, արվածն էլ քամուն տալ: Պետք է ստացիոնար ծառայել, ամեն օր մի լավ եւ օգտակար բան անել:

Ոչ մեկն իր տնից փորձ չի բերել, շփվելով, գործ անելով կարող ես միայն փորձ ձեռք բերել:

Վստահ եմ, որ գործին գիտակ մարդ կգբաղեցնի իմ տեղը, եւ անկախ նրանից, թե ով կլինի տարածաշրջանի զինկոմ՝ ես կկանգնեմ նրա կողքին, կմասնակցեմ անցկացվող զորավարժություններին՝ ոչ միայն խորհուրդներով, նաեւ՝ անմիջական գործողություններով:

- Պարոն գնդապետ, բոլորիս համար ուղղակի՝ Մելո, նորից անդրադառնամ այն հարցին, որը շրջանցեցիք:

Մեր հրամանատարությունը, ով հրաշալի ճանաչում է Ձեզ, վստահ ենք, արդարացի որոշում կկայացնի, Ձեզ երբեք, ինչպես ասում են, ձեռքից բաց չի թողնի եւ դրա համար հազար պատճառ ու հնար կգտնի, եթե կամենա:

Ի՞նչ եք զգում, երբ օր կենդանության բազմաթիվ մարդիկ բուռն ու անկեղծ պոռթկումով դիմել են Հայաստանի Հանրապետության նախագահին՝ Ձեզ հերոսի կոչում շնորհելու խնդրանքով:

- Տեղյակ եմ եւ դրա համար շատ շնորհակալ եմ իմ ժողովրդին: Վերջերս իմացա, որ հարյուրավոր մարդիկ խնդրանքով դիմել են Գերագույն գլխավոր հրամանատարին՝ զորացրելուց առաջ ինձ հերոս ճանաչել:

Ճիշտն ասած՝ շփոթվեցի, տխրեցի, հուզվեցի: Տարբեր զգացողություն էր, մեկը մյուսից ցավոտ:

Մտածում եմ՝ ինչու՞ պետք է ժողովուրդը դիմեր, մի՞թե իմ զինակից ընկերը չի տեսել, չգիտե, թե ինչպես եմ կռվել, ինչպես եմ պատերազմի ավարտի առաջին օրից Սպարապետ Վազգեն Սարգսյանի խնդրանքով լծվել բանակաշինությանը:

Սպարապետի մի խոսքն ինձ բավական էր, որպեսզի հասկանայի, թե որքան լուրջ խնդիր է առաջարկում: Նա ասել էր՝ Մելո, բանակ ստեղծելն ավելի դժվար է, քան՝ պատերազմելը, դու չպիտի կողք կանգնես այդ սուրբ գործում:

Այդ մասին քիչ հետո կասեմ, հիմա նորից իմ ժողովրդին անդրադառնամ:

Զգացողությունս փոխադարձ է, ինձ համար ողջ Սյունիքն է լեգենդ: Ես ինքս Սյունիք աշխարհի մարդկանց՝ մանուկից մինչեւ ծեր, հերոս եմ համարում, իրական հերոսը նրանք են: Ես տեսել եմ նրանց հայրենասիրական ոգին, կամքն ու վճռականությունը, նրանց միասնական համախմբումն եմ տեսել, երբ վտանգվել է հայրենիքը, աշխարհի հայության բռունցքն եմ տեսել, թե ինչպես են հազար թեւ առած՝ թռչել դեպի պատերազմի բոցերի մեջ վառվող հայրենիք:

Ես ոչ միայն սյունեցուն եմ հերոս համարում, այլ՝ աշխարհասփյուռ ողջ հայությունը: Այդպիսի հերոսական ազգ ոչ մի տեղ չես գտնի, պատերազմի ժամանակ այդպիսի համախմբումը բացառիկ երեւույթ է:

Մելիքսեթ Արամի Պողոսյան. ծնվել է 1960թ. օգոստոսի 31-ին Գորիսի շրջանի Տեղ գյուղում:

1967-1977թթ. սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում, ավարտելուց հետո աշխատանքի է անցել Տեղի կոլտնտեսությունում:

1988թ. ընդգրկվում է Արցախյան շարժման մեջ:

1989թ. միավորում է Տեղ գյուղի կամավորական ջոկատները եւ ստեղծում «Մելիք-Բարխուդար» ինքնապաշտպանական ջոկատը՝ ընտրվելով ջոկատի հրամանատար:

1989-1990թթ. «Մելիք-Բարխուդար» ջոկատը մասնակցել է Գորիսի շրջանի Տեղ, Խնձորեսկ, Կոռնիձոր, Շուռնուխ, Խանածախ, Խոզնավար գյուղերի պաշտպանությանը:

1990-1991թթ. հատուկ գնդի կազմում մասնակցել է ՀՀ սահմանների պաշտպանության համար մղված մարտերին:

1992թ. մայիսի 12-ին Մելիք-Բարխուդարի տանը խորհուրդ գումարվեց, որտեղ որոշվեց ամեն գնով գրավել «Թուրուսի խութ» կոչվող ռազմավարական հենակետը, որտեղից ամեն օր կրակ է թափվում շրջակա հայկական գյուղերի վրա:

Մ.Պողոսյանն անձամբ նախապես տեղազննում կատարելուց հետո մայիսի 16-ին իր ջոկատի մարտիկներին առաջնորդում է դեպի թշնամու հենակետը: Մարտն ավարտվում է ինքնապաշտպանական ջոկատի փայլուն հաղթանակով: Թշնամին տալով զոհեր՝ ռազմադաշտում թողնում է մեծ քանակությամբ զենք, զինամթերք եւ խուճապահար նահանջում:

«Թուրուսի խութի» գրավումը դարձավ Զանգեզուրյան ռազմաճակատի բեկումնային հաղթանակներից մեկը, որի տրամաբանական ավարտը եղավ Լաչինի մարդասիրական միջանցքի գրավումը:

Թշնամուց առգրավելով մեծ քանակությամբ զենք-զինամթերք՝ «Մելիք-Բարխուդար» ջոկատը Մ. Պողոսյանի գլխավորությամբ մայիսի 18-ին մասնակցեց նաեւ Լաչինի ազատագրմանը:

Այնուհետեւ «Կոբրա» կոչվող ռազմավարական մեծ նշանակություն ունեցող հենակետի գրավումից հետո, Մ.Պողոսյանը ջոկատով մասնակցում է Դեյխանի եւ Ղոչազի գրավմանը:

1993-1994թթ. Մ.Պողոսյանը մասնակցել է հարավ-արեւելյան ուղղությամբ ընթացող մարտական գործողություններին. Կուբաթլիի, Ջեբրայիլի, Զանգելանի, Ֆիզուլիի գրավմանը, որտեղ վիրավորվել է՝ ստանալով կոնտուզիա:

Մարտական գործողությունների ժամանակ ցուցաբերած խիզախության, հայրենասիրության եւ ՀՀ ԶՈՒ-ի շինարարության գործում ներդրած բացառիկ ավանդի համար գնդապետ Մ.Պողոսյանը ՀՀ նախագահի եւ կառավարության կողմից բազմիցս պարգեւատրվել է շքանշաններով ու մեդալներով:

2017թ. ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով Մելիքսեթ Պողոսյանը զորացրվել է:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

Այդպիսի հերոսական ազգ ոչ մի տեղ չես գտնի, պատերազմի ժամանակ այդպիսի համախմբումը բացառիկ երեւույթ է:

- Հարցը մնաց, Դուք դարձյալ շրջանցեցիք այն՝ նորից անցնելով մեր ժողովրդի արդարացի գովասանքին:

Մեկ այլ հարց էլ ավելացավ՝ արդյո՞ք այդքան հեշտ կարող էին ճանապարհել Ձեզ:

- Այնքան էլ հեշտ չէ, երբ իմ մասին եմ խոսում: Մի բան կասեմ՝ հայ մարդը պետք է վառվի իր հայրենիքի համար, դողա նրան վերաբերող ամեն խնդրի վրա, երկար, շատ երկար մտածի՝ որոշում կայացնելիս, որպեսզի վաղը նոր փակուղու առջեւ չկանգնենք:

Տեսեք, երբ հեղաշրջվեց երկիրը, մենք միանգամից քանդեցինք նրա տնտեսությունը, մշակույթը, կրթության համակարգը, ամեն ինչ, որ ստեղծել էին խորհրդային իշխանությունները:

Արդյո՞ք ճիշտ վարվեցինք: Իհարկե՝ ոչ: Քանդելով ամեն ինչ, հսկա գործարանները կոպեկներով վաճառելով որեւէ լավ տղայի, ազգովին հասանք կործանման եզրին:

Սկսվեց գործազրկությունը, աղքատությունը հասավ մեծ չափերի, մարդիկ արտագաղթեցին, երկիր դատարկվեց:

Այսօր էլ չենք կարողանում այդ սխալն ուղղել: Այդպես էլ հիմա է: Փոքր երկիր ենք, եթե երկար չափենք ու կտրենք՝ նոր ծրագրեր, փոփոխություններ մշակելիս՝ չհամագործակցենք իրար հետ, հանրության կարծիքի հետ հաշվի չնստենք, էլ ավելի ծանր կործանման կգնանք:

Հիմա դառնամ կիսատ մտքիս: Երբ պատերազմից հետո Վազգեն Սարգսյանի խնդրանքով մտա բանակ, այն համարյա չկար, ոչինչ հստակեցված չէր, շատ քիչ տեխնիկա ու բազա ունեինք, չկար բժիշկ, չկային այսօրվա պատրաստված սպաները: Կարելի է ասել՝ ոչինչ չունեինք:

Առաջին գործը, որ կատարեցի, ամենադժվար ու ծանր վայրը՝ Ֆիզուլի, Իշիղլու մեկնելն էր: Այնտեղ տասնյակ ու տասնյակ զինվորներ վիրավոր էին, շուրջբոլորը՝ կեղտ ու ավերածություն:

Մեկ ամիս անց, երբ Սպարապետը եկավ Ֆիզուլի, աչքերին չհավատաց, ամեն ինչ փոխվել էր: Օրերի մեջ իմ ձեռքով մաքրել, բուժել էի զինվորների վերքերը ձեռքիս տակ ունեցած միակ՝ «մարգանցովկա» լուծույթով: Նրանք նորից կայտառացել էին, ոտքի էի հանել, աչքերից նորից կրակ էր թափվում: Տարածքը կարգավորել էի, վարդի պես բուրում էր շուրջը, վերացրել էի ավերածության հետքերը, այստեղ ապրելու եւ ծառայելու համար նպաստավոր պայմաններ էի ստեղծել:

Սպարապետը հիացմունքով ասաց. «Հենց այստեղ էլ կանցկացնենք խորհրդակցությունը, ավելի լավ ու հարմար տեղ չկա»:

Այդ օրից ի վեր անցել է 23 տարի: Չի եղել մեկ օր, որ թերանամ, խախտում թույլ տամ որեւէ հարցում՝ ծառայության, թե հանրության մեջ, չի եղել դեպք, որ ինձանից, իմ ծառայությունից «դիլխոր մնա» իմ հրամանատարությունը, թեկուզ՝ որեւէ մարդ:

Ինչու՞ եմ սա ասում, Ձեր հարցի պատասխանին եմ գալիս. իհարկե, իմ հրամանատարության համար էլ հեշտ չէ, նա էլ թեթեւ մտքերով չէ որոշում կայացրել եւ զորացրել ինձ:

Ինչպե՞ս կարող էր հեշտ զորացրել մեկին, որքան էլ օրենքը պահանջեր, ով տասը տարվա ընթացքում հանրապետության զինկոմների մեջ հինգ անգամ առաջին տեղն է գրավել, ստացել փոխանցիկ դրոշ, ով կարողացել է մեկ օրում հավաքել 4500 զինապարտ եւ 400 տեխնիկա ու ԳՈՏ-ի կողմից արժանանալ գերազանց գնահատականի, մարզի համար ապահովել առաջին տեղը, ով միայն երեսուն անգամ առաջին աստիճանի մեդալ է ստացել եւ ում երեք անգամ զենք են նվիրել, ով ՀՀ ՊՆ լավագույն գնդի հրամանատարի համար պաշտպանության նախկին նախարարի՝ Սերժ Սարգսյանի ձեռքից «1-ին աստիճանի մարտական խաչ» մեդալ է ստացել, գունդն էլ՝ մարտական դրոշ եւ համարվել է «Վարդան Մամիկոնյան» շքանշանակիր:

Բավական չէ՞, էլի՞ թվարկեմ: Վերջ չունի, էլ չխոսեմ քառօրյա պատերազմի ժամանակ հարվածող գումարտակի ստեղծման, առաջարկս պաշտպանության նախարարին ներկայացնելու մասին:

Ուրիշ հարց է, որ արժանավոր մարդուն ճիշտ ժամանակին եւ ճիշտ տեղում պետք է գնահատել, առաջ քաշել, նրա համար հորիզոններ բացել՝ իր ուժին, ռազմական տաղանդին, մարտունակությանն ու կարողություններին համապատասխան:

Չէի ցանկանա ոչ մի արժանավոր մարդու հետեւից ասեինք՝ «Գնա մեռիր, արի սիրեմ» ազգային դարձած տխուր ասացվածքը: Թող վերանա այդ ասացվածքը մեր միջից:

Գիտե՞ք, աշխարհի բոլոր անկյուններում բիզնես կարող ես ստեղծել, լավ գործարար լինել, կարող ես բիզնեսում հաջողությունների հասնել, բայց չես կարող հայրենիք ու բանակ կառուցել: Դրանք ուրիշ հասկացություն են, վեր են անձերից, բոլոր սրբություններից: Անհամեստություն չթվա, դրա համար առաքյալ պետք է լինել, առաքելություն ունենալ:

Այսօր պաշտոնով չես զարմացնի, դրանք կգան ու կգնան: Հարստությունը, փողն էլ ոչինչ են, դրանք էլ անցողիկ են, որքան էլ քրտինք թափես, տանջանքով ստեղծես:

Ի՞նչ ենք թողել պատմության մեջ, ի՞նչ ենք արել հայրենիքի համար, դա է կարեւորը:

Կարող ենք միայն մարդկային վերաբերմունքով, մարդ լինելով զարմացնել:

Ամենաուժեղ հայն իր հայրենիքը պահող, նրան գործով, ոչ՝ խոսքով սիրող, նրա վրա դողացող մարդն է: Մարդուց միայն նրա բարի անունն ու գործն են մնում:

- Կարելի՞ է ասել, որ երկրում կադրային թերացումներ կան, քանի որ խոսեցինք ճիշտ ժամանակին արժանի մարդուն չգնահատելու մասին:

Կարծես թե այսօր մեծ փոփոխությունների շրջան է ապրում ՀՀ ԶՈՒ-ն, պաշտպանության համակարգը, հենց թեկուզ՝ զինկոմների մասին առաջ քաշված նոր նախագիծը:

- Այո, ժամանակին արժանավոր մարդուն գնահատելն ու առաջ քաշելը շատ կարեւոր են: Հուսով եմ, դա էլ նոր

Հասարակարգի անցումային սխալներից է, որն անպայման կշտկվի: Սխալվելն էլ մարդկային է, ուշ չէ սխալը շտկելու, ճիշտ ճանապարհը գտնելու համար, քանի դեռ դրա հնարավորությունը կա:

Ես լավատես եմ այդ հարցում, մանավանդ՝ հիմա, երբ մեծ ծավալով կառավարական, պաշտպանական համակարգում փոփոխություններ են ընթանում: Այնտեղ նստած մարդիկ մտածում են երկրի մասին, չեն կարող անօգուտ ծրագրեր մշակել:

Բոլոր դեպքերում՝ անհատական որոշում չպետք է կայացնել, պետք է համախումբ քննարկվի, խորհրդակցվի մասնագետ, փորձ ունեցող մարդկանց հետ, հաշվի առնվեն բոլոր թեր ու դեմ կողմերը:

Ապրիլյան օրերին եւ դրանց հաջորդող լարված ամիսներին, գիտեք, հարյուրավոր առաջարկներ եմ մշակել, թերություններ մատնանշել եւ ներկայացրել պաշտպանության նախարարին: Բոլորն էլ հաշվի են առնվել, նախարարն անձամբ է կարդացել եւ նշված ուղղություններով եզրահանգում կատարել:

Ճշմարիտը դա է, միայն ընդհանուր աշխատանքը փորձառուների հետ կարող է օգուտ տալ: Եթե նոր որոշումը, ծրագիրն իրական կյանքից կտրված են, ապա խաղաղ օրերին այն կտանի փակուղի, իսկ պատերազմի ժամանակ՝ պարտության:

Վստահ եմ, որ զինկոմիսարիատների խոշորացման մասին ընդունված որոշումն էլ երկար է քննարկվել, բայց որոշակի կարծիք կհայտնեմ, երբ այն կմտնի արդեն ձեւի ու փուլի մեջ, երբ մեխանիզմը կաշխատի:

Մի բան գիտեմ. զինկոմիսարիատը հասարակության եւ բանակի կապող կամուրջն է, նրա միջոցով են համալրվում բանակի շարքերը: Խաղաղության, թե, առավելապես, պատերազմի օրերին նրա դերն ու նշանակությունն անգնահատելի են: Այն եղել, կա, ու միշտ մնալու է բանակի շարժիչ ուժն ու հենման կետը: Նրա խնդիրներն անհամեմատ մեծ ու բազմաճյուղ են, քան կարող են թվալ առաջին հայացքից:

Եթե ուզում ես հաղթանակել, բանակը հզորացնել, զինկոմիսարիատներում աշխատանքը պետք է ավելի հզորացնել:

- Եվ ահա, այսպիսի բարդ ժամանակներում Մելո հրամանատարը, կամ ինչպես ժողովուրդն է ասում, Սյունյաց Մելոն զորացրվում է:

Բայց, ասեմ, ժողովուրդն այն կարծիքին է, որ քո աստղն արդեն փայլում է երկնքում: Բառացի մեջբերեմ տարածաշրջանի մարդկանց խոսքը. «Մելոն մնում է Մելո, դրանով նրա փառքը չի նվազում, թող մտածեն զորացրողները»:

- Արդեն ասացի, որ զորացրվելուց վատ չեմ զգում, չեմ նեղացել ոչ մեկից, շնորհակալ եմ բոլորին համատեղ ծառայության համար:

Կուզեի ժողովուրդս հանգիստ լիներ՝ Մելոն միշտ քայլելու է իր հետ, ուրախ ժպիտով եւ բաց ճակատով, քաղաքի մի ծայրից՝ մինչեւ մյուսը, բարեւելու է բոլորին:

Էլի շարունակելու եմ կանգնել նեղն ընկած մարդու, երկրի, մեր պետության բոլոր խնդիրների կողքին: Պատերազմից հետո սուրս պատվով դրել եմ պատյան, շարունակել բանակաշինության պատվավոր գործը:

Հպարտ եմ հեռանում, ափսոսալու ոչինչ չունեմ. ինչ արել եմ, իմ պատվի եւ հայրենիքիս համար եմ արել, չարիք չեմ եղել ժողովրդիս գլխին, ինչպես ասում են, վազող ջրի առաջ քար չեմ նետել, թեւեր չեմ փշրել: Ուր հասել եմ՝ միայն օգնել եմ:

Գլուխ պահելով, կեղծ համբավ եւ անուն հորինելով, երկար չես գնա, հայրենիք չես պահի: Եթե այդպես լիներ՝ հազար տարի կարող ես գլուխ պահել եւ ապրել: Դա ի՞նչ ապրել է: Կոպիտ է ստացվում, բայց այդպես անասունն էլ է գլուխ պահում, ուտում, փարթամ խոտերի մեջ բառաչում, սատկում-գնում՝ կաշին թողնելով: Կաշի չպետք է թողել, այլ՝ բարի անուն եւ գործ:

Ընդհանրապես, չէի ցանկանա, որ շրջապատս, ինձ հավատացող, սիրող մարդիկ տխրեին իմ զորացրվելով:

Նորից ասեմ, որ զորացրումս ճիշտ եւ օրինավոր քայլ էր, կյանքի բնականոն ձեւ: Ավելի երիտասարդները թող գան, միայն թե՝ կառույցն ավելի ուժեղացնելու համար:

Ուժեղացնենք, ոչ թե ուժեղին տանենք, թույլին բերենք: Այսպես պետք է լինի սերնդափոխությունը: Թույլ մարդու հետ հաշվի չեն նստում, նա չի կարող ոչ ղեկավարել, ոչ հայրենիք պահել, ոչ էլ նույնիսկ՝ ընտանիք:

Մարդ կա աշխատանքի մեջ է, բայց էությամբ, գործով՝ վաղուց զորացրված: Նա մոլախոտ է կոչվում, պետք է նրանից ազատվել, որպեսզի առողջ բույսն աճի:

Այսօր մենք իրավունք չունենք կադրային քաղաքականության մեջ սխալ թույլ տալ, դա կհանգեցնի նրան, որ մոլախոտերը կբազմանան, կխեղդեն մեզ, որն էլ կտանի լիակատար ձախողման:

Իմ օրինակով ասեմ. եթե Մելոն թուլացել է, պետք է ազատել աշխատանքից, տեղն ուժեղ մեկին բերել, ով կուժեղացնի կառույցը: Առաջինը ես կծափահարեմ: Թույլը կթուլացնի շարքերը, ուժեղը՝ կուժեղացնի: Այդ մեկ հոգուց շատ բան է կախված:

Ժամանակներն արագ են փոխվում, մենք պետք է շատ զգույշ եւ շրջահայաց լինենք, այլապես կարող ենք կորցնել արյան գնով, քրտինքով ձեռք բերածն էլ, նույնիսկ՝ ամենաթանկը՝ անկախությունը:

Այսօր 21-րդ դարն է, մենք պետք է խելքով ապրենք, այնպես, որ տեխնիկայի, սպառազինության այս հզոր մրցավազքում կարողանանք կանխել մինչեւ ատամները զինված հակառակորդի ոտնձգությունները եւ արժանի հակահարված տալ:

Նորից եմ ասում՝ երկրին, նրա բանակին վերաբերող ամեն մի գործողություն, ծրագիր առաջ քաշելիս՝ նպատակ եւ գաղափար պետք է տեսնենք, եւ՝ թե այն ինչ օգուտ կտա մեր երկրին, պետությանը, մեր տարածքներին: Ինչպիսի՞ն կլինի, ի վերջո, արդյունքը:

Հայ մնալու-չմնալու խնդիր է, իրավունք չունենք թուլացնել շարքերը, սահմաններ պահելը մեր ճակատի գիրն է, չմոռանանք:

- Քաջ մարդու համար, ի՞նչ եք կարծում, կա՞ տարիքային սահմանափակում, մանավանդ, որ ընդամենը 57 տարեկան եք:

- Քաջը միշտ քաջ է մնում, մեռած, թե՝ ողջ, սահմանափակում չկա: Ապրիլյան օրերին մենք այդպիսի շատ քաջեր ունեինք՝ սպիտակահեր, տարիքը վաղուց անցած, նույնիսկ՝ հենակներով:

Նա երկնքից էլ կարող է դաս տալ, հողի տակից էլ:

- Դատավճի՞ռ է զորացրվելը:

- Ո՞վ է ասում: Ոչ, դատավճիռ չէ. այսօր էլ ուժեղ եմ, խելքս ու միտքս ճկուն են, ոչ հոգեպես եմ թուլացել, ոչ էլ՝ ֆիզիկապես: Առաջվա պես հարյուրավոր կիլոմետրեր կարող եմ ոտքով գնալ, մասնակցել զորավարժությունների, վազել, դեռ մի հազար հոգու էլ թողնել հետեւում:

- Տեղ գյուղի կամավորական ջոկատի Մելո հրամանատարը հիշու՞մ է երիտասարդ լրագրողիս առաջին ռեպորտաժը Տեղի մատույցներից, ջոկատի տղաների, նրա հրամանատարի մասին: Թուրուսի խութը գրավելուց օր առաջ էր, երբ նախապատրաստական խնդիրներով մի քանի ժամով ջոկատն իջել էր գյուղ:

Այդ մասին իմացել էր թերթի խմբագիրը՞ Սամվել Ալեքսանյանը, եւ անմիջապես ինձ գործուղել պատերազմական գոտի:

- Անգիր եմ հիշում, կարող եմ վերնագիրն էլ ասել: «Զանգեզուր» թերթի այդ համարն էլ սրբությամբ պահում եմ: Հիշում եմ նաեւ, որ «Մելիք-Բարխուդար» շտաբում մեզ հետ զրույցի նստած՝ հրետակոծություն սկսվեց:

Այդ օրը գյուղում որքան խաղաղ զոհեր ունեցանք, շտաբը փլվեց: Սեւ փոշու եւ ծխի մեջ վազում էինք հրդեհվող տների ուղղությամբ՝ օգնելու մարդկանց, հրդեհը հանգցնելու:

Մեզնից ցանկացած մեկն այդ օրը կարող էր զոհվել, չէ՞ որ վայրկյաններ առաջ դուրս եկանք շտաբից:

- Կեցցեք, հապա ինչու՞ էիք ասում՝ կոնտուզիա եմ ստացել: (Ծիծաղում ենք):

- Մի քանի անգամ եմ կոնտուզիա ստացել, բայց դա չի խանգարում, որ հիշեմ նաեւ, թե այդ օրն ինչպես քեզ ուղարկեցինք Գորիս՝ վիրավորներով լցված «Շտապ օգնության» մեքենայով:

Հիշում եմ նաեւ՝ ինչպես էիր օգնում գյուղի տարեց մանկաբարձուհուն՝ վիրավոր գյուղացու բեկորից բացված ոտքը մշակելու՝ ինքդ էլ սրտի դեղ խմելով:

Ատամնաբույժ Սասունը, ով ինքն էլ, ինչպես բոլոր տեղցիները, ազատամարտիկ էր դարձել, տվեց վալիդոլը՝ ասելով, որ երկրորդը չուզեմ, քիչ է, խնայում է:

Հիշում եմ նաեւ, թե ինչպես մայրս գոմից հանեց ադրբեջանցի ամուսին գերիներին, որպեսզի քեզ ցույց տա:

Մենք նրանց կերակրում եւ պահում էինք՝ մեր գերիների հետ փոխանակելու համար:

- Իսկ Մելո հրամանատարն ադրբեջաներեն նրանց ասաց՝ կուզե՞ք ձեզ մատաղ անեմ սահմանամերձ գյուղ եկած լրագրողի ոտքերի տակ: Կարծում էի՝ լուրջ եք ասում, վախեցա:

(Ծիծաղում ենք: Այդ օրը ջոկատի տղաների ու նրա հրամանատարի հետ զրույցռեպորտաժն ավարտին հասցվեց Մելո հրամանատարի հայրական տանը՝ ծանր հրետակոծությունից հետո եւ միայն կեսգիշերին Գորիսի հիվանդանոցի «Շտապ օգնության» մեքենան տեղ հասավ, որով էլ ճանապարվեցի տուն:

Այստեղ էլ իմացա, որ Գորիսն էլ այդ օրը հրետակոծվել էր):

Հրաշալի եմ հիշում, երբ կորցրիր երկամյա որդուդ՝ Գեւորգին, չկարողացար իջնել դիրքերից, մասնակցել նրա հուղարկավորմանը:

Պատերազմի բոցերի մեջ էր ջոկատդ: Բոլորս գիտեինք՝ հրամանատար Մելոն շարունակում է կռվել՝ ինքն էլ վիրավոր:

Տխուր է, չհիշենք, անցնենք առաջ:

Հրաժեշտի նոտայի պես չհնչի, համոզված եմ, դեռ շատ եմ «Կամանդիր» Մելոյի հետ նստելու զրույցի:

Ի՞նչ կմտորեր տեղցի, իր հող ու ջրի պես պարզ ու մաքուր մնացած Մելոն՝ ինքն իր հետ:

Ի՞նչ կուզենար աշխարհից: Համարեք՝ լսող չկա:

- Մտորելու շատ բան կա: Ընդհանրապես, մարդ պետք է հաճախ մտորի, հաշիվ տա ինքն իրեն, օրվա արած-չարածի, իր ճիշտ ու սխալի մասին: Բարձը միայն քնելու համար չէ:

Ամենօրյա մտորումս սա է. մարդս միշտ մարդ մնա: Նորմալ մարդը պիտի Աստված ու խիղճ ունենա: Իր ապրած կյանքում՝ լինի պատերազմ, թե՝ խաղաղություն, մարդ իր դեմքը, իր խոսքը չպիտի փոխի, եթե փոխեց՝ նա մարդ չի, նա տղամարդ կոչվելու, եկեղեցի մտնելու, եկեղեցի կառուցելու իրավունք էլ չունի: Հաստատուն եւ ճշտով ապրող մարդ մնալն է կարեւոր:

Թույլերը պատճառ են փնտրում, որ արդարացնեն իրենց սխալները, իրենց, ուժեղն իր խնդիրն է կատարում:

Էլի ամենալավը մեր ժողովուրդն է, նրանից լավն ու կարեւորը չկա, երկրից, հայրենիքից բարձր ոչինչ չկա: Մեր երկիրն է, մենք պիտի վառվենք այս երկրի համար, մեր մարմնով պիտի տաքացնենք նրան:

Ես կարող էի հազար անգամ զոհված լինել, բայց ողջ եմ մնացել: Ինպե՞ս կարող եմ շնորհակալ չլինել իմ Աստծուն, որ հնարավորություն է տվել ապրելու, բանակ կազմավորելու, շարքերում լինելու, հիշելու ու հավերժացնելու բարձունք գրաված ընկերներիս, մեր հարյուր-հազարավոր զոհերին՝ խաչքարեր ու հուշարձաններ, փառքի սրահներ կառուցելով:

Կյանքը մի բաժակ է, կաթիլ-կաթիլ լցնում ես, պետք է մաքուր ջրով լցնես, որ խմողը չթունավորվի, չզզվի քո ապրած կյանքից:

Այդ բաժակը թափելը հեշտ է, պետք է դողանք, որ չթափվի կաթիլ-կաթիլ հավաքած բարի անունդ, ընկերությունդ, հարգանքդ ու պատիվդ:

Իսկ պաշտոն կոչվածը սեփականացնելու, դրանով մարդկանց խեղդելու համար չէ, այլ ծառայեցնելու, որ մարդիկ ու հայրենիքդ զորանան, լավերն առաջ գնան, գրավեն իրենց արժանի տեղը, եթե պետք է՝ նույնիսկ քո տեղը:

18 տարի զորամասի հրամանատար եմ եղել, ուր էլ եղել եմ՝ մարտունակությունն ու կարգապահությունը բարձր էին, ծաղկի պես եմ պահել զինվորին էլ, անձնակազմն էլ, տարածքն էլ: 1500 զինվոր մեկ մարդու պես մտել են գնդի ճաշարան. միշտ մաքուր, կոկիկ, հաշտ ու համերաշխ, մի մեծ տան, հոր ու որդիների պես:

Թող մի զինվոր ասի՝ հրամանատարն ինձ խորթ աչքով է նայել, հոր պես չի վերաբերվել:

Նույնն էլ՝ տասը տարի եւ երկու ամիս՝ զինկոմիսարիատում:

Ինչ արած, ժամանակը հոսում է, ժամանակները փոխվում են, տարիք ու նոր սերունդ է գալիս: Իմ գնալու հերթն է եկել, բնական է:

Գնում եմ՝ խնդիրներս մինչեւ վերջ անթերի կատարած, խիղճս՝մաքուր, հոգիս՝ հանգիստ, որ կարողացել եմ այդքանն անել՝ առանց մեկ խախտումի:

Դա է իմ միակ հարստությունը, որ տանում եմ ինձ հետ:

Ոչ այն մարդկանց պես, ովքեր ուղղակի ծառայում են՝ իրենց ծառայածից բան չհասկանալով, վերջում էլ ասելով՝ գնացի թոշակի:

Իմ կենսագրությունն էլ, կատարածս գործն էլ պարզ լույսի պես դրված են սեղանին, եթե որեւէ բիծ գտնեն, թող երբեք հետ չկանչեն ինձ:

Այսպես, թե այնպես, ես երբեք չեմ հեռանալու բանակից, միայն այստեղ եմ տեսնում իմ հետագա տարիները:

Ի՞նչ եմ ցանկանում. ուզում եմ, որ երկիրս լցվի հայրենասեր, աշխատող, գործն առաջ տանող, համեստ ու արժանավոր մարդկանցով, լավագույնները գնահատված լինեն, մի փոքրիկ գյուղ երեք-չորս մասի չբաժանվի, չմասնատվի ամեն անգամ՝ հերթական ընտրությունից:

Թող համայնքի ղեկավարները նշանակվեն, ոչ թե՝ ընտրվեն, որպեսզի վաղը զորահավաքներին տարաձայնություններ չլինեն, կողքից մեկը չասի՝ թող համայնքապետի մարդիկ գնան:

Մարդիկ պետք է հասկանան, որ ոչ թե համայնքապետի կամ մարզպետի կանչով են գնում, այլ՝ հայրենիքի կանչով:

Տեսեք, հասարակության տարանջատումներից բանակն է առաջինը տուժում, հայրենիքը:

Համայնքը, մարզը մասնատելով՝ երկիրն է մասնատվում. կուզեի միասնական լինեինք, համախմբված, միմյանց արժանիք տեսնեինք, գնահատեինք ու ծառայեցնեինք երկրին:

Ուզում եմ խաղաղ ապրի մեր ժողովուրդը, բոլորս ենք խաղաղություն ուզում՝ առաջին գծից մինչեւ Գերագույն գլխավոր հրամանատար, ովքեր լավ գիտեն պատերազմ-չարիքի եւ թանկ խաղաղության գինը:

Իսկ դրա համար հզորանալ է պետք:

Ուզում եմ հայը՝ որտեղ էլ լինի, հայի պատիվը բարձր պահի, հպարտ քայլի, ամոթով չթողնի ոչ իր շրջապատին, ոչ էլ՝ իր երկրին:

Իսկ ամենաշատը կուզեի՝ հայն ապրեր իր երկրում: Բոլորին եմ խնդրում՝ հայրենիքից չգնալ: Հայրենիքն իր մարդկանցով է հայրենիք, իր ժողովրդով: Հայրենիքից նեղանալ, խռովել չկա: Իսկ աշխատողի համար աշխատանք միշտ էլ այստեղ կա: Աշխատանքի լավն ու վատը չկա:

Ես հավասար գնահատել եմ ե՛ւ հավաքարարի, ե՛ւ սպայի աշխատանքը: Ավելին ասեմ՝ որտեղ էլ աշխատել եմ՝ փառքով ու պատվով ենք ճանապարհել կենսաթոշակի գնացող հավաքարարին՝ ծաղիկներով, շնորհակալությամբ, քաղցր նվերներով ու խոսքերով:

Հայն իր ծոցից ծնված մեծին, հերոսին, իր աշխատանքը կատարող վարորդին ու հավաքարարին պետք է կարողանա սրտանց գնահատել:

Ցավոք, մենք հաճախ, լավագույն դեպքում, գնահատում ենք ուշացումով, գնահատում ենք օտարին, ով մի քանի ժամով՝ իր շահից ելնելով, պարտականության եւ ներկայացում տալու պես, այցելում է մեզ, որակում կատարած գործը, հետո էլ՝ հեռանում եւ մոռանում ընդմիշտ՝ լինի դա ռուս լեյտենանտ, օտարազգի լրագրող, թե՝ …

Իրար գնահատող լինենք: Ամենալավը մեր ժողովուրդն է, մենք ենք: Միայն մենք կարող ենք իրար մատից փուշ հանել, իրար դարդ հասկանալ, դարման լինել:

Շատ բան չեմ ուզում՝ միայն բարին եւ լավագույնն ազգիս:

Մեկ էլ՝ չմեռնեմ, տեսնեմ հայրենիքիս ծաղկումը, Արցախի ճանաչված անկախությունը:

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Կույրերի միջազգային օրը՝ Սյունիքի միջնակարգ դպրոցում

Նոյեմբերի 14-ին՝ Կույրերի միջազգային օրվա առթիվ, Սյունիքի միջնակարգ դպրոցի տարբեր դասարանների աշակերտների մասնակցությամբ տեղի ունեցավ գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված Կոմիտաս վարդապետին:

Ազգային տարազին բնորոշ էլեմենտներով համազգեստ հագած աշակերտները ներկայացրին մեծն Կոմիտասի կենսագրությունը, ստեղծագործական ուղին, որոնք ուղեկցվում էին երաժշտական կատարումներով: «Երկինքն ամպել է», «Անձրեւ եկավ», «Խնոցու երգը», «Լորիկ», «Կաքավիկ», «Խնկի ծառ» եւ մի քանի այլ կոմիտասյան երգեր հնչեցին աշակերտների շուրթերից, որոնք դահլիճում ստեղծեցին ուրախ տրամադրություն՝ հաճելի ակնթարթներ պարգեւելով ներկաներին: Իսկ «Թագվորի մեր դուս արի» երգը գեղեցիկ բեմականացմամբ ներկայացվեց, որտեղ «հարսի» ու «փեսայի», «սկեսրոջ» եւ «սկեսրայրի» գլխավոր դերակատարներն աշակերտներն էին: Հայկական ավանդական հարսանիքին բնորոշ լավաշով, մեղր ու ընկույզով, ափսեներ ջարդելով, կոնֆետներ բաժանելով եւ մի քանի այլ «ատրիբուտներով» ուղեկցվեց կատարումը, ինչը նաեւ «ուսուցողական» կարելի է համարել, քանի որ ոչ ոքի համար էլ գաղտնիք չէ, որ այսօր ազգային շատ ավանդույթներ, ցավոք, մոռացվում կամ «համեմվում» են եվրոպական երանգներով:

Հաճելի էր լսել միջոցառման կազմակերպիչներից դպրոցի երաժշտության ուսուցչուհի Անահիտ Դավթյանի կատարմամբ երգերը: Ինչպես փաստեց ուսուցչուհին, կոմիտասյան երգերն աշակերտները հաճույքով են սովորում: Դպրոցում անցկացվող խմբակի ուսումնական պլանում ներառում է ոչ միայն Կոմիտասի, այլեւ այլ երգահանների երգացանկից երգեր: Ի դեպ, աշակերտները մեծ սիրով են մասնակցում այդ խմբակներին:

Դպրոցի տնօրեն Լիլիթ Առաքելյանը միջոցառման ավարտին շնորհակալություն հայտնեց թե՛ կազմակերպիչներին, թե՛ մասնակիցներին՝ նման գեղեցիկ միջոցառում կազմակերպելու, հաճելի պահեր պարգեւելու համար: **«Մեր դպրոցի ուսուցիչներն օր օրի հաճելիորեն զարմացնում են մեզ իրենց գաղափարներով, մտահղացումներով, որոնք իրականություն են դառնում նմանատիպ միջոցառումների տեսքով: Մաղթում եմ, որ բոլորիդ օջախներում միշտ տիրի ուրախությունը, եւ հնչեն ոչ միայն կոմիտասյան, այլեւ մեր նշանավոր երգահանների մեղեդիները»,** - մասնավորապես նշեց Լիլիթ Առաքելյանը:

Դպրոցի ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ Արմինե Վեզիրյանը տեղեկացրեց, որ 2017թ. ողջ ժամանակահատվածում պարբերաբար անց են կացվել «Մեր մեծերը» շարքից ընտրված հայ նշանավոր արվեստագետներին նվիրված տարբեր միջոցառումներ՝ ցերեկույթների, բաց դասերի, ուսուցողական դասամիջոցների, ցուցահանդեսների տեսքով: Մասնավորապես ընդգրկել էին Վահան Թեքեյան, Հովհաննես Այվազովսկի, Ալեքսանդր Մանթաշյան, Կոմիտաս, առաջիկայում նաեւ՝ Տիգրան Չուխաջյան: Գալիք տարում նախատեսում են նշել ազգային տոները, Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակը, երկար տարիների ընդմիջումից հետո՝ Աշխատավորների միջազգային օրը եւ այլն:

Հարցին, թե արդյո՞ք այս միջոցառումների առատությունը չի խանգարում բուն դասապրոցեսի ընթացքին, Արմինե Վեզիրյանը պատասխանեց. **«Չեն խանգարում, քանի որ թե՛ դրանց փորձերը, թե՛ միջոցառումներն անց են կացվում դասերից հետո՝ նախապես պայմանավորված ժամին: Բացի դրանից՝ աշակերտները մեծ սիրով են մասնակցում այդ ամենին»:**

Միջոցառման կազմակերպիչներից դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Հասմիկ Ավետիսյանը նշեց, որ օրվա միջոցառումը կայացավ՝ հաջող ընթացք ստանալով: **«Աշակերտները ողջ օրվա ընթացքում սպասում էին իրենց ելույթներին, փորձերին մասնակցում էին ակտիվ ու պատասխանատվությամբ՝ արտահայտելով նաեւ սեփական կարծիքն ու տեսակետները: Այդ ամենը հաշվի առնելով՝ կազմակերպում ենք նմանատիպ բովանդակալից, գեղեցիկ միջոցառումներ»,** - օրն ամփոփեց Հասմիկ Ավետիսյանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գիտնականները պահանջում են...

Մեր առջեւ 4-րդ դասարանի «Ես եւ շրջակա աշխարհը» դասագիրքն է (Ա. Հովսեփյան, Ն. Տողանյան, Լ.Ավագյան) հայերեն լեզվով՝ հաստատված Կրթության ու գիտության նախարարության կողմից 2015 թվին: Դաս 50. գունավոր լուսանկար «Քարահունջի աստղադիտարան», կարդում ենք հայկական լեռնաշխարհում պահպանված «հինավուրց աստղադիտարանների» մասին, նույն էջին՝ «Արագածում գտնվող նոր տեսակի ռադիո-օպտիկական աստղադիտակ, որի հեղինակն է ականավոր գիտնական Պարիս Հերունին»:

Մամուլում բազմիցս նշվել է, որ Հերունու պնդումները «Քարահունջի աստղադիտարանի» (հայկական Սթոունհենջ Epress.am) ու «ռադիոօպտիկական աստղադիտակի» յուրօրինակության մասին իրական գիտության հետ որեւէ կապ չունեն: Կրկնենք՝ «Զորաց քարեր» հուշարձանը որեւէ կապ չունի Քարահունջ գյուղի հետ, որը նույնիսկ հուշարձանի մոտակայքում չի գտնվում: Ներկայումս չկա որեւէ հիմք պնդելու, որ հուշարձանի քարերը կանգնեցվել են աստղագիտական օրացույցի նպատակներով, իսկ իրականացված հնագիտական պեղումները համոզիչ կերպով հերքել են հուշարձանի՝ Հերունու կողմից ենթադրաբար հաշվարկված տարիքը. իսկ անցքեր կան նաեւ տվյալ վայրում ու այլուր հայտնաբերված այլ քարերի վրա: «Հերունու աստղադիտակը» երբեւէ որեւէ գիտական ադրյունքներ չի ստացել, որոնք ենթակա կլինեին գիտական ամսագրերում հրապարակման, իսկ հենց աստղադիտակի նախագծում խախտված են տարրական գիտական սկզբունքներ:

Մեր երկիրն ու մեր գիտությունը հարուստ են ձեռքբերումներով ու անձանցով, որոնք պետք է ներկայացվեն մեր դպրոցականներին: Հայրենասիրության քողի տակ կեղծ գիտություն ներկայացումը, սակայն, անընդունելի է, հատկապես դպրոցում, քանի որ կարող է հանգեցնել յուրահատկության անհիմն կոմպլեքսի ու արդյունքում՝ խոցելի դարձնել մեր մշակույթն ու գիտությունը:

Կրթության եւ գիտության նախարարությանը կոչ ենք անում ձեռնարկել կտրուկ միջոցներ մեր դպրոցն ու մշակույթը կեղծ գիտական «հայրենասիրությունից» պաշտպանելու համար: Պարզապես աներեւակայելի է, որ 21-րդ դարում նման անհեթեթությունները կարող են պաշտոնապես հանդուրժվել:

Վահագն Գուրզադյան, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Էդմոն Գազազյան, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պավել Ավետիսյան, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Աշոտ Փիլիպոսյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նամակի բնօրինակը հրապարակվել է «Հայաստանի ձայնը» թերթում:

epress.am
14 նոյեմբերի 2017թ.

Մեկնարկել են ձմեռային սեզոնի նախապատրաստական աշխատանքները

ՀՀ միջպետական ճանապարհներում ձնաբքի ժամանակ մարդկանց եւ տրանսպորտային միջոցների անվտանգ երթեւեկությունն ապահովելու, անվտանգ տարածք տեղափոխելու, վարորդներին եւ ուղեւորներին անհետաձգելի օգնություն ցուցաբերելու համար սկսվել է առաջնային օգնության հենակետերի տեղադրման գործընթացը:

Արագ եւ արդյունավետ օգնություն ցուցաբերելու նպատակով ՀՀ Վայոց ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի եւ Լոռու մարզերում կծավալվեն ժամանակավոր հենակետեր: Շարժական հենակետերում շուրջօրյա ծառայություն կիրականացնեն փրկարարները, ովքեր ձյան մեջ արգելափակված քաղաքացիներին հրատապ օգնություն կցուցաբերեն՝ տրամադրելով տաք սնունդ եւ առաջին բուժօգնություն:

Շուրջօրյա հենակետերը կծավալվեն՝

• Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքից մինչեւ «Զանգեր» կոչվող հատվածում,

• Սյունիքի մարզի «Զանգեր» կոչվող հատվածից մինչեւ Գորիս քաղաք ընկած հատվածում եւ Շուռնուխ գյուղի հատվածում,

• Գեղարքունիքի մարզի Վարդենյանց լեռնանցքում, Սոթք-Քարվաճառ ավտոճանապարհին, Ճամբարակ-Բերդ ավտոճանապարհին (Գեղարքունիքի մարզի հատվածում),

• Տավուշի մարզի Բերդ-Ճամբարակ ավտոճանապարհին (Տավուշի մարզի հատվածում), Դիլիջանի ոլորաններում, Կիրանց-Ոսկեպար ավտոճանապարհին

• Լոռու մարզի Սպիտակի ոլորաններում:

Հենակետերի տեղանքի ընտրությունը քննարկվել է մարզային փրկարարական վարչության պետերի հետ, որոշում է կայացվել վրանները ծավալել ձնաբքի, մերկասառույցի, արգելափակման իմաստով ամենավտանգավոր հատվածներում: Անհրաժեշտության դեպքում նախարարությունը պատրաստ է նման վրաններ ծավալել նաեւ մյուս մարզերում:

16 նոյեմբերի 2017թ.
mes.am

Հայտարարություն

«Թունել» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենը ս.թ. նոյեմբերի 29-ին՝ ժամը 14-ին, ընկերության բաժնետերերին հրավիրում է արտահերթ ընդհանուր ժողովի:

Օրակարգ

1. Ընկերության մի շարք բաժնետերերի բաժնետոմսերն օտարելու վերաբերյալ դիմումների քննարկում /զեկուցող՝ գլխավոր տնօրեն Միշա Ջհանգիրյան/

Ժողովը տեղի կունենա ընկերության վարչական շենքում:

Հասցեն՝ Սյունիքի մարզ, գ.Լեռնաձոր, Անդոկավան 2/10

Մ.Ս.Ջհանգիրյան
Ընկերության գլխավոր տնօրեն
20 նոյեմբերի 2017թ.

Հաղորդագրություն

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործ է հարուցվել Վահե Գարեգինի Գասպարյանի կողմից Գարեգին Էդիկի Գասպարյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին:

Բոլոր այն անձանց եւ կազմակերպություններին, որոնք տեղեկություններ ունեն քաղաքացի Գարեգին Էդիկի Գասպարյանի (ծնված 04.11.1968թ., հաշվառված Սյունիքի մարզ, ք.Կապան, Դավիթ Բեկի 7/34 հասցեում) գտնվելու վայրի մասին, խնդրվում է հայտնել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ք.Կապան, Մ.Ստեփանյան 3/2, հեռախոս (0285) 5 29 59:

Դատավոր՝
Ա.Թումանյան

QR կոդ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 28.11.2017թ.: